



ԱՐ
ԱՍՏԾՈ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1995

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ԱՐ ԱՍՏԾՈՒ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1995

ՆՎԻՐՎՈՒԹ Է ԲՈՒՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻՆ, ՖԻԴԱՅԻՆԵՐԻՆ,
ԱՅՍՕՐՎԱ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Ա. Տերյանը ավարտել է Երևանի Պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Աշխատում է Երևան քաղաքի պատմության թանգարանում: Զբաղվում է հայոց պատմության հնագույն հարցերով: Աշխատում է «ԱՐ աստծո պաշտամունքը Հայաստանում» թեմայի վրա: Ներկայացվող աշխատությունը հեղինակի հինգ տարիների աշխատանքի արդյունքն է: Աշխատության մեջ հեղինակը հենվելով հնագույն պատմական վերալուծումների, ազգագրական ու հնագիտական նյութերի, ինչպես նաև հայոց անձնական ու աշխարհագրական անունների վրա, ցույց է տալիս, որ անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ապրող հայ-արիական ցեղերը ունեցել են արեգակնային ԱՐ աստծո պաշտամունք, ուր խոր հետք է թողել հայոց մշակույթի, կենցաղի ու սովորույթների ձևավորման և զարգացման վրա:

Աշխատության մեջ փորձ է արվում հիմնավորելու մի տեսություն, համաձայն որի հայ և արմեն անունները ծագում են ԱՐ աստծո անունից:

Գիրքը նախատեսվում է ընթերցող լայն շրջանները համար:

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատությունը հեղինակի տարբեր տարիներին հրատարակած հոդվածների համահավաքն է՝ նվիրված Հայաստանում արևի ԱՐ աստծո պաշտամունքին:

Հետևելով նախորդ ուսումնասիրողների կատարածին (Պ. Ղափանցյանի, Ա. Մատիկյանի, Մ. Գալուքչյանի, Ա. Վարպետյանի և այլոց), հավաքելով նաև իր նկատած փաստերն ու փաստարկները, հեղինակը հանգել է հետևյալ խիստ հիմնավոր եզրակացություններին: 1. Հայաստանը վաղնջական ժամանակներից ներկայանում է որպես համատարած արևապաշտության երկիր: 2. Հայաստանի բնիկների (հայերի) գլխավոր աստվածը՝ սկսած մ. թ. ա. Յ-րդ հազարամյակից, եղել է արևի հզոր աստված ԱՐ-ը, որը խոր հետք է թողել նրանց կյանքի բոլոր բնագավառներում: Ավելին, նույնիսկ քրիստոնեական դարերում արևի ԱՐ աստծու պաշտամունքը իրեն բավականաչափ զգացնել է տվել Հայաստանում: 3. ԱՐ գլխավոր աստծու պաշտամունքով ևս Հայաստանի բոլոր հազարամյակների բնիկները իրար են ձուլվում-նույնանում այնպես, որ ամեն մի բաժանում-օտարում (օրինակ, ասենք ուրարտացիների օտարումը) դառնում է արհեստական, հակապատմական:

Ահա այս և նմանաբնույթ արդյունքներով, ինչպես նաև ընձեռած հիմքերով գրախոսվող աշխատությունը անկասկած արժանի է հրատարակման, որպես մի փոքրիկ, բայց կարեւոր էջ հայագիտության բնագավառում:

Միաժամանակ մեր անհամաձայնությունն ենք հայտնում Ա մասի Յ-րդ գլխի վերաբերյալ. «ԱՐ աստվածը և հայարմեն անունները» խորագրով: Այստեղ հեղինակը պաշտպանում է արդեն առաջ քաշված մի տեսություն, ըստ որի

Հայ և Արմեն անունները ծագում են ԱՐ աստծո անունից և
դրանով հակադրվում է Խորենացուն:

Իրականում Խորենացու բացատրություններն այդ առ-
թիվ այսօրյա գիտականության պահանջներով բնավ առար-
կելի չեն (ոչ պատմականորեն, ոչ էլ ստուգաբանորեն):

Քրախոսվող աշխատությունում կան նաև այլ առարկե-
լիներ, սակայն դրանք ոչ էական վրիպումներ են, որոնք
չեն նսեմացնում աշխատության արժեքը:

ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ԼԵՎՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

9. 05. 1995 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեոնաշխարհը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկն է: Նյութական մշակույթի բազմադարյան հետքերը, պատմական հնագույն վկայությունները, դիցաբանական գրույցներն ու առասպելները, աշխարհագրական և անձնական անունները խոսում են այն մասին, որ հայերը Առաջավոր Ասիայում մեծ տեղ ու դեր են ունեցել: Նրանք վաղ են կազմավորվել որպես ազգ, ունեցել են ուժեղ պետականություն և բարձր մշակույթ:

Հայտնի է, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը ըստ նորագույն հետազոտությունների Հայկական լեոնաշխարհն է: Անհիշելի ժամանակներից այդ տարածքում ապրող այդ ցեղի ուղղակի ժառանգորդը հայ ժողովուրդն է, որը հազարամյակներ շարունակ ապրում և արարում է իր բնօրրանում: Գեղեցիկ ու դաժան այս լեոնաշխարհում է հայ մարդը կառուցել հույակապ կոթողներ, շեներ ու քաղաքներ, այստեղ է ստեղծել ավանդություններ, գրույցներ: Այստեղ է երկրպագել նաև իր առաջին աստծուն՝ արևի հզոր աստված ԱՐ-ԱՐԱՅԻՆ¹:

Բոլոր ժամանակներում գիտնականները, որ ձեռնամուխ էին լինում հին աշխարհի պատմության ուսումնասիրմանը, անպայման հանդիպում էին Հայաստանի ու հայերի մասին բազմաթիվ հիշատակությունների ու փաստերի, իսկ գիտական որոնումները նրանց բերում էին Հայկական լեոնաշխարհ: Հայոց պատմությունն ուսումնասիրողները հասկանում էին, որ Հայաստանն ու նրա պատմությունը կարող են

¹ Յգուագործվում են աստծո անվան և՛ ԱՐ, և՛ Արա ձևերը

բանալի հանդիսանալ այլ ժողովուրդների պատմության ուսումնասիրման, նրանց ծագման, տեղաշարժերի ու անկման համար: Ահա թե Հայաստանի մասին ինչպես է արտահայտվել ուսումնասիրողներից Շարեքը դեռ 20-րդ դարի սկզբներին. «Պատմության լույսը նախ և սուսը կծագի Վանա լճի շրջակայքի վրա, որ մասն է լեռնածավալ աշխարհին, որ ինչպես վերին Եփրատի ու Տիգրիսի, նմանապես Երասխա երկու կողմերը տարածվելով այսօր Հայաստան անունը կկրե»²:

Դեռևս 16-րդ դարում իսպանացի գիտնական Անդրես դե Պոսան ուսումնասիրելով հայ-բասկական տարնազը, աշխարհագրական անվանումներն ու սովորությունները, կարծիք է հայտնել, որ Իսպանիայի հնագույն բնակիչների՝ բասկերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է:

Անգլիայի պատմության հնագույն փաստաթուղթը 8-րդ դարում գրված անհայտ հեղինակի «Անգլո-սաքսոն քրոնիկներ» փաստաթուղթն է: Գոյություն ունեցող չորս ձեռագրերից երեքը ունեն սուսաջարան, որտեղ հստակորեն գրված է, որ անգլիական կղզիների հնագույն բնակիչները եկել են Հայաստանից³:

Միջնադարյան գերմանական «Աննոյի երգը» պոեմում (11-րդ դար) նշվում է, որ գերման (բավարներ) քաջ ազգը եկել է Հայաստանից⁴:

Միջագետքում կատարված հնագիտական պեղումների արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շումերական քաղաքակրթությունն ստեղծողները հարավային Միջագետքը յուրացնելուց սուսը բնակվել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում: Հին աշխարհի պատմության ու մշակույթի լավագույն գիտակներից մեկը՝ Կ. Կերամը գտնում է, որ շումեր ժողովուրդը եկել ու բնակություն է հաստատել Տիգրիսի ու Եփրատի դելտայում, իր

² Հանդես Ամսօրյա, 1900 թ. էջ 81, Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպ. շրջ. պատմ., Երևան, 1933 թ., էջ 3

³ Գարուն (ամսագիր), 1990 թ., թիվ 6

⁴ Ա. Վարպետյան, Ուլբեր են ի վերջո արիները, Երևան, 1990 թ., էջ 134

հետ բերելով ձևավորված մշակույթ, դպրություն և օրենքներ⁵:

Շումերական դյուցազնավեպի այսօր հայտնի 9 պատումներում (վիպերգ) մեծ տեղ է տրված Շումեր և Արատտա երկրների փոխհարաբերություններին: Վիպերգում Արատտան հանդես է գալիս «սուրբ օրենքների երկիր» մակդիրով: Զգացվում է, որ Արատտա երկիրը ինչ-որ պատճառով շումերների համար «սուրբ» է համարվել:

Ուսումնասիրողներից Մ. Գալուբշյանը և երիտասարդ պատմաբան Ա. Մովսիսյանը Արատտան տեղադրում են Հայկական լեռնաշխարհում: Հետևաբար «սուրբ» է համարվել այն երկիրը, որը նրանց (շումերներ) նախահայրենիքն էր և որի մասին նրանք հիշում էին: Վիպերգում հիշատակված իրադարձությունները տեղի են ունեցել մ. թ. ա. 28—27-րդ դդ.:

1970—1980-ական թվականներին լույս տեսած գիտական աշխատություններից ուշադրության արժանի է Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի «Հնդեվրոպացիների լեզուն և հնդեվրոպացիները» աշխատությունը, որտեղ հեղինակները բազմաթիվ փաստերով ապացուցում են, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը Անդրկովկասից հարավ և Միջագետքից հյուսիս ընկած տարածքներն են: Իսկ այդ տարածքներն աշխարհագրորեն համապատասխանում են Հայկական լեռնաշխարհին:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ մեզ հայտնի աշխարհի բոլոր քարտեզներում այդ ժամանակ հայտնի ընդամենը մի քանի երկրների շարքում միշտ նշված է Հայաստանը: Այսպես. մ. թ. ա. 24—23-րդ դարերով թվագրվող շումերական մի քարտեզի վրա կարդացվում է «Աստվածների ժողովի լեռ» (երկիր) տեղանունը, որը համապատասխանում է Եփրատի և Տիգրիսի ակունքներում գտնվող լեռնային երկրին՝ Հայաստանին⁶:

Հույն ճանապարհորդ և աշխարհագիր Հեկատեոս Միլե-

⁵ Կ. Կերամ, Աստվածներ, Դամբարաններ, Գիտնականներ, Եր. 1971 թ., էջ 315

⁶ Ե. Բասունի, Նախապատմական Հայաստան, Բեյրութ, 1950 թ., էջ 30

թացու կազմած աշխարհի հնագույն քարտեզի վրա նշված է Հայաստանը (մ. թ. ա. 517 թ., նկար 1): Մ. թ. ա. 5-րդ դարում կազմված Բաբելական կոչված քարտեզում⁷ ընդամենը վեց երկրների շարքում դարձյալ նշված է Հայաստանը (նկ. 2): Ամենայն հավանականությամբ քարտեզներում նշված են այդ ժամանակ աշխարհին հայտնի, վաղուց կազմավորված, կայուն, ուժեղ և նշանավոր պետությունները:

Նշված բոլոր փաստերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհը միշտ բնակեցված է եղել, իսկ գիտական ուսումնասիրությունները (լեզվական, ազգագրական և հնագիտական) ցույց են տալիս, որ ընդարձակ այս տարածքում ապրող մեր նախնիները ունեցել են արեգակնային ԱՌ աստծո պաշտամունք:

ԱՌ աստծո պաշտամունքը մեծ ազդեցություն է ունեցել մեր նախնիների հավատալիքների, հաշոց լեզվի, մշակույթի, կենցաղի ու սովորույթների ձևավորման վրա:

ԱՌ աստծո անունը հատկապես զգալի է հաշոց անձնական ու աշխարհագրական անուններում:

Հազարավոր տարիներ մեր ժողովուրդը պաշտել է արևը ու արևի ԱՌ աստծուն, բայց պատմական ինչ-որ ժամանակահատվածում այն տեղի է տվել: Սիրված այս աստվածության պաշտամունքը սակայն չի անհետացել, այլ շարունակել է հարատևել ավելի ուշ հանդես եկած Արամազդ, Վահագն, Միհր աստվածների մեջ, նրանց փոխանցելով իր նկարագրի շատ հատկանիշներ:

ԱՌ ԱՍՏԾՈ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Հնագույն ժամանակներում յուրաքանչյուր ցեղ ունեցել է պաշտամունքի իր առարկան՝ աստվածը, իսկ յուրաքանչյուր

⁷ Լ. Շահինյանը իրավացիորեն գտնում է, որ Բաբելական քարտեզը ստեղծվել է մ. թ. ա. 7-րդ դարից ոչ ուշ, երբ դեռ կանգուն ու հզոր էին Ասորեստանն ու Բաբելոնը, իսկ Մարաց ու Պարսից պետությունները դեռ չէին կազմավորվել որպես հզոր պետական միավորումներ: Լ. Շահինյան, «Ռուսարտու» ստեղծվածը, Երևան, 1994 թ., էջ 60

աստիճան ունեցել է իր անունը: Ցեղը ունեցել է բազմաթիվ աստիճաններ, սակայն ցեղը ունեցել է նաև իր գլխավոր աստիճանը:

Հնագույն պատմական վկայությունները, լեզվական, ազգագրական և հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների հնագույն, գլխավոր աստիճանը արևի ԱՐ աստվածն էր: Երկնային լուսատուներից ամենալուսավորն ու պայծառը արեգակն է, որ լույս ու ջերմություն է տալիս մարդուն, ապահովում բերք ու բարիքով: Մեր նախնիները պաշտելով արևը, նրան վերագրել են արարչական գործություն, ընդունել են նրան որպես ամենայն բարիքներ ստեղծող գերբնական մի ուժ, որպես կյանքի աղբյուր, սկիզբ ամեն ինչի: Եվ բնական է, որ մարդը «գարեգակն աստված համարեր և անոր նայելով զաստված պաշտեին»⁸:

Փարունը և տաք արևը, որ փոխարինել են Հայկական լեռնաշխարհի հաճախ շատ ցուրտ ու երկարատև ձմեռներ, մեծ ուրախություն են պատճառել մարդկանց: Եվ մարդիկ, որ մեծ անհամբերությամբ էին սպասում արևին, գարնանն ու բնության զարթոնքին, գարնան զալուստը նշել են մեծ տոնախմբություններով (բարեկենդան, տեսունընդամաս, համբարձման տոն):

Արևը մարդուն հետաքրքրել է նաև նրանով, որ ամեն օր մեռնում և հարություն է առնում: Արևի մեռնելը, անհետանալը անվանվել է մայրամուտ, իսկ նորից ծագելը, հարություն առնելը՝ արևածագ: Մարդը նկատում էր, որ ինչպես արևն է մեռնում (արևամուտ) ու հարություն առնում (արեվածագ), այնպես էլ տարին է մահանում (ձմեռ) ու մահից հետո հարություն առնում (գարուն): Մահվան ու հարության այս գաղափարը չէր կարող անտարբեր թողնել մարդուն և նա իր գլխավոր աստծուն օժտել է նաև մեռնող-հառնող հատկությամբ: ԱՐ աստվածը մեռնող-հառնող բնության ու զարթոնքի աստվածն էր նաև: Հետագայում այս

⁸ Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վեներիկ, 1910 թ., էջ 93

երևույթին հանդիպում ենք Արա Գեղեցիկի և Պլատոնի հերոսներից մեկի՝ ԷՐ Արմենիոսի կերպարներում, որը ԱՐ աստծո պաշտամունքի ուշ շրջանի արձագանք էր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՐ աստվածը ունենալով պաշտամունքի երկարատև շրջան, պատմական ինչ-որ ժամանակահատվածում ունեցել է նկարագրի զարգացման ու բարդացման շրջան: Ժամանակի ընթացքում այս աստվածությունը բացի արևի, գարնան, բնության ու զարթոնքի աստված լինելուց⁹ ձեռք է բերել նաև ռազմի մեծ ու հզոր աստվածության նկարագիր: ԱՐ աստվածը որպես արևի, գարնան ու զարթոնքի աստված հաղթում է դաժան ձմռանը, որեմն նա ոչ միայն գեղեցիկ է, այլև ուժեղ, և ձեռք է բերում նաև ռազմի աստվածության նկարագիր:

ԱՐ աստվածը իր բնույթով խաղաղ նկարագիր և գեղեցիկ համամարդկային հատկանիշներ է ունեցել: Երբ ԱՐ աստծուն համեմատում ենք փոքրասիական այլ աստվածների հետ անմիջապես նկատելի է դառնում ԱՐ աստծո նկարագրի խաղաղ բնույթը: Այսպես. Բել-Մարդուկ, Թամնուգ, Ատտիս, Մոլոք և այլ աստվածների տոնահանդեսների ժամանակ տեղի էին ունենում ինքնաձաղկման և ինքնաներքի հիացման արարողություններ, իսկ Մոլոքին զոհաբերում էին մանուկներ: Ասորական թագավորները (Սարդուր 1-ին, Սալմանասար 3-րդ, Թիգլաթպալասար 3-րդ) իրենց արձանագրություններում (մ. թ. ա. 2-րդ հազ. սկիզբ— 1-ին հազ. վերջ) պատմում են հանուն Ասսուր աստծո և նրա հովանավորությանը իրենց ձեռնարկած արշավանքների ու այդ ընթացքում կատարած ավերածությունների, թալանի ու դաժան սպանությունների մասին:

Հայոց արքաները ևս դիմել են իրենց աստվածներին, նաև ռազմի աստվածներին (ԱՐ, Վահագն): Տրդատ 1-ին

⁹ Այս հարցերի մասին խոսում է Գ. Ղափանցյանը «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատության մեջ: Նա մեծ ուշադրություն է դարձնում ԱՐ աստծո բուսական-գարնանային բնույթին, շեշտելով հատկապես նրա մեռնող-հառնող բնույթը: Ղափանցյանը միաժամանակ ակնուշուտ է ԱՐ աստծո արևի աստված լինելու հանգամանքը:

թագավորը (63—88 թթ.) դիմելով հայ ռազմիկներին ասում է. «Քաջութին հասցէ ձեզ ի քաջեն Վահագնէ»¹⁰:

Իր նկարագրի խաղաղ այս բնույթը ԱՐ աստվածը պահպանել է շատ հազարամյակներ և «կրելով հրապուրիչ գաղափարախոսություն ունեցավ լայն տարածում, դառնալով ունիվերսալ կրոն»¹¹:

Շատ խոր հնության պատճառով դժվար է նշտորեն որոշել ԱՐ աստծո ինչպես ծագման, այնպես էլ նկարագրի զարգացման ժամանակաշրջանը:

Գիտական ուսումնասիրությունները պարզել են, որ հնդեվրոպացիները ունեցել են ակունքային մի ընդհանուր մշակույթ (հնդկական վեդաները, հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպը, իրանական «Ավեստան»), որը յուրաքանչյուր ցեղ զարգացրել է յուրովի, բաժանվելով մայր ցեղից: Հնդկական «Ռիգվեդայում» և իրանական «Ավեստայում» աղոտ հիշողություններ են պահպանվել նախահայրենիքում գտնվող Երասխ (նաև Արաքս, Ռահ) գետի մասին ՌԱՍԱ (Ռիգվեդա) և ՌԱՀԱ (Ավեստա) անունով¹²: Տվյալ դեպքում Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների համար գոյություն է ունեցել արևի ԱՐ աստծո պաշտամունքը, որը ցեղի գլխավոր աստվածն էր և ցեղի տարածման հետ տարածվել է նաև նրա պաշտամունքը: Ուսումնասիրությունները (հնագիտական պեղումներ, ազգագրական նյութեր) պարզել են, որ սկսած մ. թ. ա. 4-րդ հազարամյակից արիական ցեղերը (շումերներ, իսկ մ. թ. ա. 3—2-րդ հազ.՝ հույներ, հնդիկներ, իրանցիներ) նոր բնակավայրեր ու նոր արոտավայրեր փնտրելու նպատակով սկսել են հեռանալ նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից: Երանք լավ կազմակերպված համայքներ էին, լավ ռազմիկներ, որ զինված էին մետաղե զենքերով, ունեին նաև ձիեր ու մարտակառքեր: Եվ սրանով պետք է բացատրել արիների հաջողության գաղտնիքը, երբ դուրս գալով բնօրրանից նրանք տարածվեցին աշխարհում իրենց հետ տանելով

¹⁰ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914 թ., էջ 73

¹¹ Մ. Գավուրջյան, Հայ ու Արմեն անունների ծագումը և Ռուսաստան, Բեյրութ, 1973 թ., էջ 92

¹² Ս. Երեմյան, Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը, «Գիտություն և Տեխնիկա» (ամսագիր), 1985 թ., թիվ 4, էջ 32

այնտեղ ստեղծված հոգևոր մշակույթի բազմաթիվ արժեքներ, այդ թվում աստվածների ու նաև գլխավոր աստծո պաշտամունքը: Յեղի մի մասը սակայն մնաց հայրենիքում, դիմացավ հազարամյակների փորձությանը, կազմավորվեց որպես ազգ (հայ ազգը), ստեղծեց իր պետությունը և ինքնատիպ մշակույթը, որը նրա համար մեծ տեղ ու դեր ապահովեց համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

Նոր պայմաններում նախնիների գլխավոր աստվածը միշտ չէ, որ պահպանել է իր նախկին հատկանիշները, նա ենթարկվել է տեղի ու ժամանակի ազդեցությանը, ձեռք բերել նոր որակ ու բովանդակություն: Սակայն չնայած փոփոխություններին, նկարագրի մի փոքրիկ գիծ հաճախ բավական է նոր աստվածների մեջ ճանաչելու արևի հնագույն ԱՐ աստծուն: Այսպես. Թրակիա-Սպարտա-Հունաստանում գոյություն է ունեցել ԱՐԵՍ¹³ (գարնան ու ուազմի աստված), ՀԵՐՄԵՍ (հովիվների ու երկրագործների աստված, ավելի ուշ Ջևաի սուրհանդակը), ԷՐՈՍ (գարնան աստված), Մակեդոնիայում՝ ԱՐԱՍ (արևի ու ուազմի աստված), Իրանում՝ ԱՀՈՒՐԱՄԱԶԴ (գրադաշտության գլխավոր աստվածն էր, ստեղծել է երկինքը, երկիրը և մարդուն), Հոռոմ՝ ՄԱՐՍ (ուազմի աստված), սլավոնների մոտ ՅԱՐ-ՅԱՐԻԼԱ-ՅԱՐԻԼՈ՝¹⁴ (բուսականության, երկրագործության, հետո նաև ուազմի աստված), գերմանացիների մոտ՝ ԷՐԹԱԳ¹⁵, Հնդկաստանում՝ ՌԱՄ¹⁶ աստվածների պաշտամունքը և այլն:

Ե՛վ բնույթով, և՛ անունով ԱՐ աստծո հետ մեծ հարա-

¹³ Գերմանացի Վելկերը ԱՐԵՍ աստծո անունը կապում է հայերեն արև բառի հետ, Մ. Գավուրջյանը, Աշխ., էջ 97

¹⁴ Գ. Ղափանցյանը ցույց է տալիս, որ սլավոնական ՅԱՐ-ՅԱՐԻԼԱ-ՅԱՐԻԼՈ անունները կապված են ԱՐ աստծո անվան հետ և «ա» ձայնավորը հետագայում առջևից ստացել է «յ» հնչյունը, իսկ «իլա» «իլո» մասնիկները հետո են ավելացել արմատին, ունենալով փաղաքշական իմաստ: Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944 թ., էջ 84

¹⁵ Մ թ. ա. 1-ին դարում գերմանական Խերուսկ ցեղի առաջնորդին կոչում էին ԱՐՄԻՆԻՈՒՍ

¹⁶ ՌԱՄ անունը Մ. Գավուրջյանը, Ա. Վարպետյանը բխեցնում են ԱՐԱՄԻՑ

գատություն է ցուցաբերում արևելյան պալոնների ՅԱՐ-ՅԱՐԻԼԱ-ՅԱՐԻԼՈ սաստվածք: Ըստ ռուս ուսումնասիրողների ՅԱՐԸ արևի, գարնան, բերքի ու սիրո սաստվածն էր: Այս սաստվածը պալոնների սիրված սաստվածներից էր և նրան են նվիրվել բազմաթիվ տոներ, որոնք նշվել են վաղ գարնանը կամ ամռանը¹⁷: Հիշենք, որ ԱՐ սաստծուն նվիրված տոնակատարությունները ևս կատարվել են գարնանն ու ամռան սկզբներին: ԱՐ սաստծո նման ՅԱՐ սաստվածը ևս ավելի ուշ ձևոք է բերել նաև ռազմի սաստվածության նկարագիր: Այս առումով հետաքրքիր են պալոնական ՅԱՐՈ-ՊՈԼԿ (ՅԱՐԻ զորք) հատուկ անունը և ярым-կատաղի բառը¹⁸:

ԱՐ սաստծո պաշտամունքը տարածված էր նաև հարևան երկրներում: Այսպես Եգիպտոսում տարածված էր ՌԱ¹⁹, Խեթական պետությունում՝ ԱՐԱ, Ասորեստանում՝ ԱԱՐԱ, Բաբելոնում՝ ԱՐԻԱ, Վրաստանում՝ ԱՐԱԼԻ²⁰ սաստվածների պաշտամունքը և այլն:

Ահա թե այս երևույթի մասին ինչպես է արտահայտվել անգլիացի արևելագետ Արչիբալդ Սեյսը. «Արալի պաշտամունքը ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում, ապա տարածվել հին աշխարհի բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների դիցարանը»²¹:

ԱՐ սաստծո պաշտամունքի այս տարածվածությունը, ինչպես արդեն նշվել է, բացատրվում է նրա խոր հնությանը, նկարագրի գեղեցիկ հատկանիշներով ու խաղաղ բնույթով:

Այսպիսով ԱՐ-ԱՐԱ սաստծո պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից և Հայաստանից բացի լայնորեն տարածված է եղել նաև Փոքր Ասիայում և նրա սահմաններից դուրս:

¹⁷ Большая Советская энциклопедия, 1931 г., том 65:

¹⁸ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 83

¹⁹ Ուսումնասիրողները գտնում են, որ ՌԱՆ Եգիպտոսի ծնունդ չէ, այլ մուտք է գործել Սիրիայի կողմերից (Լ. Քինգ, Վ. Ֆլինդերս), որը հարևան էր Հայաստանին, Մ. Գալուբջյան, նշվ. աշխ., էջ 96

²⁰ Գ. Ղափանցյանը վերոհիշյալ աշխատության մեջ խոսում է հունական ԱՐԱՍ, ԱՐԵՍ, եգիպտական ՌԱ, խեթական ԱՐԱ, վրացական ԱՐԱԼԻ, լիդական ԱՐՄԱՍ ու ԱՐ սաստծո նմանությունների մասին:

²¹ ՀԱՅ ԴԱՏ (հանդես) 1989 թ., թիվ 4, էջ 5

2. ԱՐ ԱՍՏՎԱԾԸ ԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԹԱԳԱՎՈՐԸ

Հայ պատմագրության մեջ դժբախտաբար քիչ են տեղեկությունները ԱՐ աստծո մասին: ԱՐ-ԱՐԱ անունը առաջին անգամ հիշատակված է Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ (5-րդ դար): Այդ աշխատության մեջ Խորենացին հիշատակում է Նոյի որդի Հաբեթից սերված 11 հայ նահապետների, այդ թվում՝ Արամի որդի Արա Գեղեցիկին: Հայտնի է, որ Խորենացին իր պատմությունը գրելիս օգտվել է ժողովրդական բանահյուսությունից և ասորի պատմիչ Մար Արաա Կատինայից, իսկ վերջինս՝ էլ՝ մեզ չհասած գրավոր աղբյուրներից: Խորենացու շնորհիվ մեզ է հասել «Արա Գեղեցիկ և Ծամիրամ» գրույցը, որի բովանդակությունը հետևյալն է. Ասորեստանի արքա Նինոսի²² կինը՝ Ծամիրամը լսած լինելով հայոց արքա Արայի գեղեցկության մասին, իր ամուսնու մահվանից հետո պատգամախոսներ է ուղարկում Արա Գեղեցիկի մոտ, առաջարկելով կնության առնել իրեն, փոխարենը խոստանալով Ասորեստանի գահը: Սակայն մերժվում է Արայի կողմից: Սաստիկ չարանալով Ծամիրամը մեծ զորքով գալիս է Հայաստան: Տեղի ունեցած ճակատամարտում Արան սպանվում է: Ծամիրամը հրամայում է Արայի մարմինը դնել իր ապարանքի վերնատանը, որպեսզի իր աստվածները վերակենդանացնեն նրան: Երբ դա չի հաջողվում, Ծամիրամը հրամայում է թաղել Արայի դին, իր հոմանիներից մեկին հագցնում է նրա զգեստները և ժողովրդին հանգստացնելու համար հայտարարում, որ իր աստվածները վերակենդանացրին Արային²³:

Խորենացին հայտնում է նաև, որ հետագայում Ծամիրամը իշխանությունը հանձնել է Արայի որդուն՝ Արաան Արային²⁴:

Հայ պատմագրության մեջ «Արա Գեղեցիկ և Ծամիրամ»

²² Առն Ծահիկյանը Նինոսին նույնացնում է Սարգոն 1-ին (մ. ա. թ. 1880—1948 թթ.) թագավորի հետ: Լ. Ծահիկյան, Գիրքը դարերի խորքից, Երևան, 1984 թ., էջ 57

²³ Սեբեոսի մոտ Արայի վերքերը լիզում են Ծամիրամի արայեզ աստվածները, Սեբեոս, Պատմություն, Երևան 1939 թ., էջ 6

²⁴ Մ. Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981 թ., էջ 77

գրույցին անդրադարձել են նաև Ագաթանգեղոսը, Անանուն պատմիչը, Սեբեոսը, Փ. Բյուզանդը, Թ. Արծրունին և ուրիշներ: Ե՛վ Խորենացու, և՛ մյուս պատմիչների աշխատություններում Արան չի վերակենդանանում: Ուսումնասիրողների մեծ մասը դա կապում է քրիստոնեության հետ և գտնում, որ քրիստոնյա պատմիչները չէին կարող թույլ տալ, որ Արան Քրիստոսի նման հարություն առներ: Նկատենք սակայն, որ և՛ Խորենացին, և՛ մյուս հայ պատմիչները Արա Գեղեցիկին իրական, պատմական անձ են համարել: Հետևաբար նա չէր կարող մահվանից հետո հարություն առնել և մահանում է, ինչպես հասարակ մահկանացու, այլ բան է, որ Արա Գեղեցիկը իր մեջ ներառել է ԱՐ աստծո նկարագրի շատ հատկանիշներ (գեղեցիկ է, բարի, բազ), իսկ ժողովուրդը հետագայում նրան օժտել է սեռնող-հառնող հատկությամբ, շատ ցանկանալով, որ սիրելի արքան ևս վերակենդանանա ինչպես ԱՐ աստվածը:

«Արա Գեղեցիկ և Ծամիրամ» գրույցի այլ տարբերակներ ևս գոյություն ունեն, որոնք մեզ են հասել հույն հեղինակների միջոցով: Դրանցից մեկը, որ հայտնի է Բեռլինի պապիրուսների հավաքածուից, հրատարակել է գերմանացի արևելագետ Վիլքենը 1893 թ.²⁵: Այդ պապիրուսների մի մասը չի ընթերցվում ջնջված լինելու պատճառով: Ընթերցվող մասի բովանդակությունը հետևյալն է. 17 տարեկան Նինոսը սիրահարվում է իր մորաքրոջ 13 տարեկան աղջկան: Նինոսի մոր անունը Թամբե է, իսկ աղջկա մորը՝ Դարկեյա: Սակայն Նինոսին թույլ չեն տալիս ամուսնանալ, քանի որ աղջիկը փոքր է, իսկ երիտասարդ աղջիկը մորաքրոջ հետ խոսելիս աստիճանորեն լռում է, կարծես ինչ-որ գաղտնիք ունի պահած: Երկու մայրերը խորհրդակցում են...: Նինոսը մեծ զորքով (70 000) արշավում է Հայաստան: Սկսվում է պատերազմ: Պատմության շարունակությունը անհայտ է:

Ուսումնասիրելով այս սիրավեպը Ն. Ադոնցը գրում է. «Արշավանքի ուղղությունը ցույց է տալիս, որ աղջկա սերը

²⁵ Վիլքենը պապիրուսները թվագրում է ոչ ոչ քան մ. թ. ա. 1-ին դար, ելնելով այն բանից, որ դրանց վրա կարդացվում է Տրայանոս կայսեր (58—117 թթ.) անունը: Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 37

Հայաստանում էր»²⁶: Պապիրուսների շրջափոխվող մասում կարդացվում են նաև «Էրօս» և «Արմենի» բառերը, որեմն ախոյանը ոչ միայն հալոց թագավորն է թվում, այլև հավանորեն ինքն Արան, որի անունը տեղի է տված և նույնացած քաջահայտ Էրոսին»²⁷ եզրակացնում է Ադոնցը: Ինչպես տեսնում ենք, աղջկա անունը ոչ մի տեղ չի հիշատակված, հավանաբար այն պատճառով, որ բնագիրը ամբողջական չէ, սակայն աղջկա մոր Դարկեյա անունը հիշեցնում է հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացու պատմության Դերկետոյին, որը Ծամիրամի մայրն էր:

Սիկիլիացու միջոցով մեզ է հասել այս սիրավեպի մեկ այլ տարբերակ (մ. թ. ա. 1-ին դար): Սիկիլիացին իր պատմության մեջ բազմաթիվ մանրամասներ է հայտնում Ծամիրամի կյանքից: Նա ուշադրություն է դարձնում նաև նրա ծագումնաբանությանը, պատմում Ծամիրամի մոր՝ Դերկետո դիցուհու մասին և այլն: Սիկիլիացին այնուհետև պատմում է Նինոսի արշավանքների մասին, նախ դեպի Արաքիա, որի թագավորն էր Արայուրը, այնուհետև՝ Հայաստան, որի արքան Բարզանեսն էր²⁸:

Ն. Ադոնցը ենթադրում է, որ տեղի է ունեցել անունների շփոթություն և Արայուրը Հայաստանի թագավորի անունն է²⁹: Այս ենթադրությունը ամենայն հավանականությամբ ճիշտ է:

Հույն հեղինակներից հետաքրքիր է նաև Պլատոնի ԷՐ-ԱՐՄԵՆԻՈՍԻ մասին պատմությունը: Պլատոնը իր «Հանրապետություն» աշխատության մեջ (մ. թ. ա. 4-րդ դար) պատմում է ծագումով պամփուլացի (Վիլիկիա) խիզախ մի մարդու՝ Արմենիոսի որդի ԷՐ-ի մասին, որն ընկնում է պատերազմի դաշտում: Դիակները հավաքելուց հետո, 12-րդ օրը, երբ նրա մարմինը դնում են թաղման խարույկի վրա, նա վերակենդանանում է, և սկսում պատմել, թե ինչ է տեսել այն աշխարհում: ԷՐը շատ բան է տեսել այն աշխարհում՝

²⁶ Ն. Ադոնց, Հայաստանի Պատմություն, Երևան, 1972 թ., էջ 376

²⁷ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 376

²⁸ Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985 թ., էջ 16

²⁹ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 376

հանդերձյալ կյանքում: Նրան նաև հրամայված է եղել վերադառնալ ֆիզիկական կյանք ու պատմել մահվան մասին: Իր վերադարձից առաջ նա տեսել է շատ հոգիների, որոնք պատրաստվում էին ծնվել այս աշխարհում, «նրանք բոլորը շարժվում էին դեպի Մոռացության հովիտ, սարսափելի ու խեղդող շոգի միջով, և այնտեղ չկային ոչ ծառեր, ոչ ինչ-որ բույսեր և ահա երեկոյան նրանք հանգրվանեցին Մոռացման գետի մոտ, որի ջրից որոշակի չափով խմեցին և նրանք, որոնց ստողջ բանականությունը չփրկեց, այդ չափից ավելի խմեցին, և յուրաքանչյուրը, երբ խմում էր, ամեն ինչ մոռացավ: Եվ այն բանից հետո, երբ նրանք քնեցին, գիշերվա կեսին լավեց ամպրոպի ձայն, և հողը ցնցվեց ու նրանք ասուպների նման այդտեղից քշվեցին, մեկն այսպես, մյուսն այլ կերպ՝ դեպի վեր, դեպի իրենց ծնունդը: Իրեն՝ ԷՐԻՆ, ինչպես ինքն է ասում, ջուր խմել թույլատրված չի եղել, սակայն նա ասում է, թե չի հիշում, ինչ կերպ և ինչպես է վերադարձել իր մարմինը, բայց անսպասելիորեն տեսողություն ձեռք բերելով, նա տեսել է, որ ինքն արևածագին պառկած է թաղման խարույկի վրա³⁰:

ԷՐ-ԱՐԱյի այս պատումի մեջ հանդիպում ենք ԱՐ աստծո մեռնող-հառնող բնույթին, որը հավանաբար ԱՐ աստծո պաշտամունքի հետ կապված ուշ շրջանի արտահայտությունն է:

Մի հետաքրքիր փաստաթուղթ ևս գոյություն ունի: Բրիտանական հանրագիտարանից տեղեկանում ենք, որ գոյություն ունեցող իռլանդական մի առասպելի համաձայն Հունաստանի կողմերից եկած անհայտ ծովահեններ թե արկածախնդիրներ գրավել են Իռլանդիան, հաղթելով դեպի Դանու աստծո ցեղին: Եկվորների մեջ եղել են ԱՅՐ և ԷՐԵՄՈՆ եղբայրները (այլ տարբերակով հայր ու որդի): ԱՅՐԸ հոչակվել է երկրի արքա ու երկրին թողել իր անունը³¹ ԱՅՐԼԱՆԴ Ireland³²:

³⁰ Платон, Республика, Москва, 1929 г., ст. 614, (հայերեն թարգմանությունը «Ուրբաթ» շաբաթաթերթից, 1992 թ. թիվ 12)

³¹ Ալ. Վարպետյան, Աշխ., էջ 131

³² Այրլանդ անվանումը մեզ հիշեցնում է Այրարատ անվան ձևը:

Արանք են այն հիմնական աղբյուրները, որոնք տեղեկություններ են հաղորդում ԱՐ-ԷՐ-ԱՐԱՅԻ մասին: Վերահիշյալ բոլոր սիրավեպերն ու գրույցներն անկասկած պատմական հիմք ունեն, որի արձագանքները հասել են մինչև 19—20-րդ դարեր, երբ ժողովուրդը բանավոր ձևով դեռ շարունակում էր պատմել Արա Գեղեցիկ թագավորի և Շամիրամ թագուհու մասին³³:

Ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է Խորենացու հետևյալ մի վկայությունը. խոսելով Արա Գեղեցիկի հայր Արամի քաջագործությունների մասին, պատմահայրը գրում է. նրա «մահվանից հետո, Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ իր հայրենիքի խնամակալ դարձավ Արան»³⁴: Հաշվարկները ցույց են տալիս, որ Արամ թագավորը և Շամիրամի ամուսին Նինոսը հանդես են եկել մ. թ. ա. 21-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբների³⁵:

Մ. Էմինը և Ն. Ադոնցը Պլատոնի Էրին նույնացնում են Արա Գեղեցիկի, իսկ Արմենիոսին՝ Արամ թագավորի հետ: Ըստ Մ. Էմինի հաշվարկների Պլատոնի և Էրի միջև ընկած է 1419 տարի: Հետևաբար Արա Գեղեցիկը³⁶ գործել է մ. թ. ա. 2-րդ հազ. սկզբների³⁷:

³³ Անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը Ուզունլար գյուղում ապաստանած կարնեցի Սահակ Սահակյանից գրի է առել «Արա Գեղեցիկ և Շամիրամ» գրույցի մեկ այլ տարբերակ, որի բովանդակությունը հետևյալն է. Արամ թագավորը, որ ապրում էր Մոսուլում, երեք տղա ուներ, կրտսերը Արա Գեղեցիկն էր, որը հոր տկարած աչքերի համար դեղ է բերում Շամիրամից: Այնուհետև Արան ամուսնանում է Զվարթի հետ, բայց Շամիրամը զորքով գալիս է Հայաստան, ճակատամարտում Արան սպանվում է և այլև, այնուհետև կրկնվում է Խորենացու պատմությունը: Ազգագրական հանդես, 9-րդ գիրք, Թիֆլիս, 1902 թ.

³⁴ Մ. Խորենացի, Աշվ. աշխ., էջ 59

³⁵ Լ. Միրիջանյան, Պատմության ու առասպելի սահմանը, Եր. 1986 թ., էջ 54

³⁶ Ռ. Իշխանյանը Արա Գեղեցիկին նույնացնում է Վանի թագավորության Արգիշտի 1-ին թագավորի (մ. թ. ա. 786—764 թթ.) հետ, Պատկերազարդ պատմ. հայոց, Եր., 1989 թ., էջ 67

³⁷ Պետք է նշել, որ վերահիշյալ բոլոր հաշվարկները խիստ մոտավոր են:

Մի քիչ ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ բացի
ԷՐ Արմենիոսից (որը, ինչպես արդեն նշվել է, ԱՐ աստծո
պաշտամունքի ուշ շրջանի արձագանք է) և ԱՅՐ-ԷՐԵՄՈ-
ՆԻՅ (որը արիական ցեղի տարածման արձագանք է),
մնացած բոլոր դեպքերում աղբյուրները խոսում են իրական
Արա թագավորի և Ծամիրամ թագուհու մասին:

Հայ պատմագրության մեջ Արա Գեղեցիկը, որպես պատ-
մական անձ, կամ ընդունվում է (Մ. Էմին, Լ. Ծահինյան,
Լ. Միրինջանյան, Ռ. Իշխանյան), կամ մերժվում (Գր-
Լաւիանցյան, Ս. Ադոնց, Ա. Մատիկյան):

Արա Գեղեցիկի պատմականությունն ընդունողները
հենկվելով Խորենացու, ինչպես նաև հայ ու օտար այլ աղբ-
յուրների վկայությունների վրա, գտնում են, որ Արա Գեղե-
ցիկը պատմական, իրական անձ է, եղել է Հայաստանի
թագավոր և գործել է մոտավորապես մ. թ. ա. 2-րդ հազ-
ակաբներից և 1-ին հազ. վերջերին:

Արա Գեղեցիկի պատմականությունը մերժողները նրան
համարում են միայն գարնան, զարթոնքի ու ռազմի աստ-
ված, իսկ «Արա Գեղեցիկ ու Ծամիրամ» գրույցը՝ առասպել:
Նրանք շեշտում են հատկապես Արաի մեռնող-հառնող
բնության աստված լինելու հատկանիշը, համեմատելով
նրան բաբելական Թամուզի, փյունիկյան Ադոնիսի (որը
հետո անցավ հույներին), եգիպտական Օզիրիսի, փոյու-
գիական Ատտիսի, սեմիտական Էշմունի և այլ մեռնող-
հառնող աստվածների հետ:

Համամիտ լինելով Արա Գեղեցիկի իրական, պատմա-
կան անձ լինելուն, նկատենք սակայն, որ նա ուշ շրջանի
պատմական դեմք է, և կապ չունի անհիշելի ժամանակնե-
րից Հայկական լեռնաշխարհում տարածված արևի աստ-
ված ԱՐ-ԱՐԱՅԻ պաշտամունքի հետ, բացի միայն անու-
նից, որ Հայկական լեռնաշխարհում դարձել էր սիրված ու
տարածված անուն:

Հետևաբար Հայկական լեռնաշխարհում եղել են արևի
ԱՐ-ԱՐԱ աստված (անհիշելի ժամանակներ) և Արա Գեղե-
ցիկ թագավոր (մ. թ. ա. 2-րդ հազ. սկզբներից— 1-ին հազ.
վերջ):

Արդեն հիշատակված ԱՐԱՅԱՆ ԱՐԱ, ԷՐ-ԱՐՄԵՆԻՈՍ,

ԱՅՐ-ԷՐԵՄՈՆ անունները անկասկած կապված են ԱՐ աստծո անվան հետ և արձագանք են այդ աստծո պաշտամունքի ու տարածվածության: Հայաստանում տարածված աշխարհագրական ու անձնական անունները, ինչպես նաև ԱՐ աստծո այլ ժողովուրդների մոտ ընդունված ու պահպանված (Արես, Արիա, Արաս) անունները հուշում են, որ աստծո նախնական անունը եղել է ԱՐ: Գ. Ղափանցյանը գտնում է, որ «ինչ-որ ժամանակ հայերը աստծուն կոչել են ԱՐ»⁸³: Մ. Գալուրջյանը ևս ընդունում է աստծո հնագույն ԱՐ անունը:

Այսպիսով Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ արիների գլխավոր ու հնագույն աստվածը արևի ԱՐ աստվածն էր: Ցավոք չեն պահպանվել տեղեկություններ ԱՐ աստծո պատվին կառուցված տաճարների, սրբավայրերի ու նրան նվիրված տոնակատարությունների մասին, իսկ որ դրանք եղել են, անկասկած է: Ամենայն հավանականությամբ ԱՐ աստծո տոնը նշվել է մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, երբ Հայկական լեռնաշխարհի ցուրտ ձմեռը տեղի է տալիս, նրան հաջորդում է գարունը և սկսվում է ցերեկվա, լույսի ու արևի հաղթանակը գիշերվա ու խավարի դեմ: Չարթնում են բնությունն ու մայր հողը, սկսվում է Նոր տարին նոր ակնկալիքներով: Հիշենք, որ ԱՐ աստվածը արևի, գարնան, բնության ու գարթոնքի աստվածն էր, և բնական է, որ նրա տոնը նշվեր հենց գարնանային արևադարձի օրը՝ մարտի 21-ին: Մեր նախնիները ադ օրը համարել են Նոր տարվա սկիզբ: Այդ մասին է վկայում Մատենադարանում պահպանվող տոմարական մի պատճենով (թիվ 1999 ձեռագիր), որտեղ գրված է հին հայկական ու հին հռոմեական ամիսների գուգահետ ցանկը: Ադ փաստաթղթի վերնագիրն է. «Ամիսք Հայոց և Հռոմի հանդեպ միմեանց», ցանկը սկսվում է նավասարդից, «Նաասարդի, որ է մարտի, Հոռի՝ ապրիլի... և վերջանում է «հրոտից՝ փեպրուարի»⁸⁹ ամսով:

⁸³ Գր. Капанцяк, Хеттские боги у армян, Ереван, 1940, стр.

⁸⁹ Ա. Արրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973 թ., էջ 99

Հետաքրքիր է, որ հնդեվրոպացիներից իրանցիները պահպանել են նոր տարին մարտի 21-ից սկսելու նախնիների կարգը:

Հայոց հեթանոսական տոմարի մեջ ևս պահպանվել են արևի ԱՐ աստծո պաշտամունքի հետքերը: Այսպես. «հեթանոսական տոմարի 6-րդ ամիսը կոչվել է Արաց, «այն նշանակել է արերի (արմեններ) օրեր և նվիրված էր ԱՐ աստծո տոնակատարություններին»⁴⁰: Ա. Մատիկյանը գրում է, որ Արաց «պիտի նշանակի Արայի օրեր»⁴¹:

ԱՐ աստծո պատկերը մեզ չի հասել հավանաբար խոր հնության պատճառով, սակայն ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ ԱՐ աստվածը հաճախ է պատկերվել իր ոտներից առյուծի հետ (ավելի հաճախ կանգնած առյուծի մեջքին): Այդպիսի պատկերներ հայտնաբերվել են Էրեբունի ամրոցի պեղումների ժամանակ: Պահպանված որմնանկարներից մեկը ներկայացնում է Վանի թագավորության գլխավոր աստված Խալդ-Հալդիին (Արդի, նաև Հայկ), կանգնած առյուծի մեջքին (նկ. Յ, մ. թ. ա. 8-րդ դար):

Արդեն նշվել է, որ ԱՐ աստվածը պատմական ինչ-որ ժամանակահատվածում իր տեղը զիջել է այլ աստվածների (Արամազդ, Վահագն, Միհր) նրանց փոխանցելով իր նրկարագրի շատ հատկանիշներ:

Այսպես. հայոց ուշ շրջանի հեթանոսական դիցարանը գլխավորում էր Արամազդը, Վահագնը ժառանգել էր արևի ու ռազմի, իսկ Միհրը՝ կրակի (արև) հատկանիշները:

Հնագույն բոլոր աստվածները հանդես են գալիս իրենց գույգերի հետ. Դումուզի-Ինանա (Շուներ), Թամուզ-Իշտար (Բաբելոն, Ասորեստան), Օգիրիս-Իզիդա (Եգիպտոս), Ատտիս-Քիբելե (Փոյուգիա), Ադոնիս-Աստարտե (Փյունիկիա), Ադոնիս-Աֆրոդիտե (Հունաստան) և այլն: Հետևաբար Հայկական լեռնաշխարհի հնագույն ԱՐ աստվածը ևս պետք է ունենար իր գույգը: Ազգագրական պատարիկները (անուններ, գրույցներ, ծիսական երգեր) մեզ հուշում

⁴⁰ Մ. Գավուրջյան, նշվ. աշխ., էջ 123

⁴¹ Ա. Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930 թ., էջ 328

են, որ շատ վաղուց Հայաստանում գոյություն է ունեցել ՆԱՐ աստվածուհու պաշտամունքը: Այս աստվածուհու մասին ևս մեզ շատ քիչ բան է հայտնի, ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ դարձյալ խոր հնություն ունի: Դժբախտաբար քիչ տեղեկություններ կան նաև հայոց հնագույն դիցարանի մասին: Այդ առումով հետաքրքիր է մեր հնագույն հարևանների դիցարանը: Այսպես, շումերները ունեցել են արևի Բաբբար և լուսնի Նաննար⁴² աստվածները: Ընդ որում Նաննար աստվածուհին շումերների մոտ ավելի մեծ կարևորություն է ունեցել, քան Բաբբարը: Ասորեստանում եղել է ՆԱՐ աստվածուհի, որն ըստ մի շարք ուսումնասիրողների (Իելմել, Ղափանցյան) ջրերի ոգին էր: Այս դեպքում կարող ենք հիշել «Սասնա ծռերի» Ծովինարին, որը հենց ջրից էլ հղիացավ⁴³: Փոյուզիացիները ունեցել են Նանե աստվածուհի⁴⁴, հույները՝ Նանե հավերժահարս, սկանդինավյան ժողովուրդները՝ Նանա դիցուհի⁴⁵:

Հայերը ևս ունեցել են Նանե աստվածուհի, որն Արամագրի դուստրն էր⁴⁶: Հայաստանի շատ շրջաններում՝ (Արցախ, Ուտիք, Լոռի) մեծ մորը այսօր էլ անվանում են նաև, նանի, նանե: Նանա սանսկրիտ նշանակում է մայր⁴⁷: Հետաքրքիր է, որ Խորենացու աշխատության մեջ Արա Գեղեցիկի կնոջ անունը Նուարդ է: Մ. Գավուրջյանը անդրադառնալով Նուարդին գրում է. «Նուարդ պիտի նշանակի

⁴² Մ. Գավուրջյանը շատ հետաքրքիր բացատրություն է տալիս Բաբբար և Նաննար անուններին: Այսպես. Բաբբարը կազմված է հայր (պապ) — ԱՐ բաղադրիչներից, իսկ Նաննարը նաև (լուսին) — ԱՐ բաղադրիչներից, որ նշանակում է ԱՐի նաև (լուսին): Մ. Գավուրջյան, Աշվ. աշխ., էջ 109

⁴³ Գ. Ղափանցյանը հետաքրքիր կապ է տեսնում պալոնոսկան Մարինա և Նար անունների միջև: Ըստ նրա, ուսաց ջրային պաշտամունքի հետ կապված Մարինա, Մարենա կամ Մարան կանացիական խրտվիլակի անունը ծագել է չպահպանված Մարինա անունից: Գ. Ղափանցյան, Աշվ. աշխ., էջ 86

⁴⁴ Ս. Երեմյան, Աշվ. հոդվածը, էջ 32

⁴⁵ Վ. Բդոյան, Աշվ. աշխ., էջ 220

⁴⁶ Ազարթանգեղոս, Պատմութիին Հայոց, Թիֆլիս, 1914 թ., էջ 400

⁴⁷ Վ. Բդոյան, Աշվ. աշխ., էջ 220

ԱՐԴ-Արայի ՆՈՒ-Անահիտը կամ Արեւի սիրելի Լուսինը»⁴⁸:

Գ. Ղափանցյանը ևս Նուարդ անունը կապում է ԱՐ աստծո պաշտամունքի հետ: Ըստ նրա Նուարդը կազմված է նու (նալ, նոր) և վարդ, ծաղիկ բառերից, որ նոր ծաղիկ իմաստն ունի, իսկ դա համապատասխանում է ԱՐ աստծո գարնան, բնության, ու գարթոնքի նկարագրին⁴⁹:

Նար աստվածուհու պաշտամունքի հետ է կապված ազգագրական երգի մի պատառիկ, որ դարեր շարունակ երգվել ու պահպանվել է մեր ժողովրդի մեջ: Ինչպես Հայաստանի շատ շրջաններում, այնպես էլ Գանձակի Բանանց գյուղում մինչև վերջերս պահպանվել էր մի սովորույթ, երբ անձրև ակնկալելու խնդրանքով երեխաները Նար (Նուրի) տիկնիկի հետ շրջում էին տները և երգում.

Նուրին, Նուրին եկել ա,
Աչպա հուրին եկել ա,
Ծալե շապիկ հագել ա,
Կարմիր գոտիկ կապել ա,
Յող տվեք, վարսը քսենք,
Զու տվեք, ձեռքը դնենք:

Ժամանակի ընթացքում ՆԱՐ աստվածուհուն ևս փոխարինել են այլ աստվածուհիներ (Ծովինար, Նանե, Անահիտ): Փոքրասիական հնագույն մայր աստվածուհիները լուսնային բնույթ են ունեցել: Եգիպտացիների Իսիսը, ասորեստանցիների Միլիտան, փյունիկեցիների Աստարտան, հույների Արտեմիսը և ուրիշներ հաճախ են պատկերվել լուսնի մահիկով: ՆԱՐ աստվածուհուն ավելի ուշ շրջանում փոխարինած Անահիտ աստվածուհին ևս նախ եղել է լուսնի աստվածուհի, իսկ հետագայում նաև՝ պտղաբերության ու սիրո աստվածուհի: Սատաղից հայտնաբերված նրան վերագրվող բրոնզե արձանիկի ճակատին թափված են երկու խուրոպիկներ լուսնի մահիկի տեսքով:

Այսպիսով վերոհիշյալ բոլոր անունները (Նանար, Նար, Նանե), նաև Հայաստանում տարածված կանացի հը-

⁴⁸ Մ. Գավուրջյան, նշվ. աշխ., էջ 106

⁴⁹ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 100

հագույն Ծովինար, Հեղնար, Էլինար, Ոսկինար և այլ անուններ, մեզ հուշում են, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն աստվածուհին ՆԱՐ աստվածուհին էր:

Հետևաբար արևի հնագույն աստված ԱՐի գույգն էր լուսնի հնագույն ՆԱՐ աստվածուհին: Խորենացին վկայում է, որ մեհյաններում դրվում էին արևի ու լուսնի արձաններ:

Յ. ԱՐ ԱՍՏՎԱԾԸ ԵՎ ՀԱՅ ԱՐՄԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայոց պատմության ու մշակույթի հարցերով զբաղվող գիտնականներին հետաքրքրել է նաև, թե ինչպես են առաջացել հայ և արմեն անունները: Այս հարցերը հետաքրքրել են նաև հայ պատմիչներին և առաջիններից մեկը, որ անդրադարձել է դրանց, պատմահայր Մովսես Խորենացին էր: «Հայոց պատմություն» աշխատության մեջ նա գրում է, որ Բաբելոնյան աշտարակաշինության անհաջող փորձից հետո Թորգոմի որդի, քաջ նախարար Հայկը չկամենալով հնազանդվել Տիտանյան Բելին, Բաբելոնում Արամանյակ որդին ծնվելուց հետո, չվում է Արարադի երկիր⁵⁰ (Վանա լճից հարավ): Այնուհետև այդ տարածքը իբրև ժառանգական կալվածք տալիս է Կադմոսին՝ Արամանյակի որդուն, իսկ ինքը մնացած մարդկանցով շարժվում է հյուսիս-արևմուտք, բնակվում մի բարձրավանդակ դաշտում, որը կոչում է ՀԱՐՔ, այսինքն թե այստեղ բնակվողները հայրերն են Թորգոմի տան սերնդի⁵¹: Այնուհետև Խորենացին պատմում է Հայկի ու Բելի պատերազմի, ադի ջուր և մանր ձկներ պարունակող ծովակի արհիև (Վանա լիճ) տեղի ունեցած ճակատամարտի և Հայկի հաղթանակի մասին: Ըստ Ղ. Ալիշանի հաշվարկների Հայկը Բելին հաղթել է 4485 տարի առաջ, մ. թ. ա. 2492 թ. (մ. թ. ա. 3-րդ հազ. կեսերին): Պատերազմից հետո ճակատամարտի տեղը Հայկը շենացնում,

⁵⁰ Մ. Խորենացի, Աշխ. աշխ., էջ 41

⁵¹ Մ. Խորենացի, Աշխ. աշխ., էջ 41

դարձնում է դաստակերտ և անվանում ՀԱՅՔ⁵²: Այնուհետև Խորենացին գրում է, որ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է ՀԱՅՔ⁵³:

Շարունակելով պատմությունը Խորենացին գրում է նաև Հայկի ծոռնորդի Արամի մասին, որը վարելով հաղթական պատերազմներ ընդարձակել է Հայաստանի սահմանները և նրա անունով էլ մյուս ազգերը մեր աշխարհը կոչել են ԱՐՄԵՆ, ԱՐՄԵՆԻԿ⁵⁴:

Խորենացու այս բացատրությունները երկար ժամանակ անվիճելի էին համարվում: Ուսումնասիրողների մի մասը անվերապահորեն ընդունում էր Խորենացու այս բացատրությունը: Սակայն ժամանակ առ ժամանակ նաև փորձեր էին արվում նորովի բացատրելու հայ և արմեն անունների ծագումը:

19-րդ դարի վերջերից և 20-րդ դարի սկզբներից եվրոպացի գիտնականները սկսեցին հետաքրքրվել հայերի ու Հայաստանի պատմությամբ, մշակույթով, նաև հայ ու արմեն անունների ծագման հարցերով և այլն:

Գիտնականների մի խումբ (Ծպիգել, Հ. Կիպերտ, Ն. Դոլենս, Ա. Խաչատրյան) հայ անունը փորձում էր բացատրել հնդեվրոպական պրտի բառով, որը պետ, գլխավոր է նշանակում, իբր իրենց այդպես են կոչել եկվոր արմենները, որպեսզի տարբերվեն բնիկներից: Հետագայում, ըստ նրանց պրտին ձևափոխվելով դարձել է հայ⁵⁵:

Պ. Ենցընը գտնում էր, որ հայ անունը ստաջացել է հեթիթների հաթ, հաթիո էթնիկական անուններից⁵⁶:

52 Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 45

53 Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 47

54 Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 53, Խորենացին խոսելով Արամի քաջագործությունների մասին, միաժամանակ նշում է, որ այդ քաջագործությունների մասին գրված չեն թագավորական կամ մեհենական մատյաններում: Մար Աբասի մատյանում գրված է, որ Արամի մասին այս պատմությունները փոքր և աննշան մարդիկ հավաքել են գուսանական երգերից (Խորենացի, նշված աշխ. ծանոթագրությունները, էջ 462):

55 Ն. Դոլենս, Ա. Խաչատրյան, Պատմություն հին հայերի, Թիֆլիս, 1909 թ., էջ 11

56 Ն. Դոլենս, Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 13

Փորձեր են եղել հայ անունը բացատրել Վանի թագավորության գլխավոր աստված Հալդի-Խալդիի անունով⁵⁷: Ն. Մառը հայ անունը կապում էր մ. թ. ա. 6-րդ դարում հյուսիսից Հայաստան արշաված հանիոխներ կամ հեհիոխների ցեղի անվան հետ:

Լևոն Ծահիճյանը «Գիրքը դարերի խորքից» աշխատության մեջ ընդունելով Խորենացու բացատրությունները հայ և արմեն անունների ծագման վերաբերյալ, բազմաթիվ փաստերով ու փաստարկներով մերժում է մնացած բոլոր ոչ խորենացիական բացատրությունները:

Ինչպես տեսնում ենք բացատրությունները բազմաթիվ են, սակայն դրանց մեծ մասը հետազայում քննություն չըբռնեց և չընդունվեց գիտնականների կողմից: Ավելի ընդունված տեսակետ համարվեց Խորենացու բացատրությունը Հայկի անունով երկիրը Հայք, Հայաստան և Արամի անունով Արմենիա կոչվելու մասին:

Սակայն ժամանակի հետ ստաջանում էին նոր հարցեր, իսկ եթե Հայկ Նահապե՛տն է իր անունը վերցրել Հայ, Հայք անունից, ե՛րբ է ստաջացել հայ անունը, ինչո՞ւ են օտարները մեզ արմեն անվանում, ո՞ր անունն է հնագույնը և այլն:

Ռստմնասիրությունները ցույց են տալիս, որ հնում ցեղի գլխավոր աստվածները մեծ դեր են ունեցել տվյալ ցեղի համախափման ու կազմավորման գործում: Հաճախ նաև կազմավորվող ցեղը ինքն իրեն կոչել է պաշտվող գլխավոր աստծո անունով⁵⁸:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները պաշտել են արևի ԱՐ աստծուն, որը նրանց հնագույն ու գլխավոր աստվածն էր: Ուրեմն կարելի է մտածել, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները ԱՐ աստծո անունով իրենք իրենց կոչել են ար-հար, իսկ բնօրրանը՝ ԱՐԱՐԱՏ, ՀԱՐՔ-ՀԱՅԷ:

Հնդեվրոպական լեզուներում, նաև հայոց լեզվում «հ»

⁵⁷ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1961 թ., էջ 105—108

⁵⁸ Աստուր-Աշշուր աստծո անունով են կոչվել ասորիներն ու Ասորեստանը

հնչյունը հետաքրքիր հնչյունափոխությունների է ենթարկվում, այն մերթ հայտնվում է, մերթ անհետանում, մերթ փոխարինվում այլ հնչյունով: Հայոց լեզուն պահպանել է օրինակներ, երբ անունը կամ բառը արտասանվում են և՛ «հ» հնչյունով, և՛ առանց «հ» հնչյունի. Արմա-Հարմա, արալեզ-հարալեզ, անդաստան-հանդաստան, արոս-հարոս, արթմնի-հարթմնի, արբել-հարբել և այլն:

Վանի բարբառում «հ» հնչյունը ընդհանրապես բացակայում է, նրա փոխարեն օգտագործվում է «խ» հնչյունը: հայ-խայ, հաց-խաց, հինգ-խինգ և այլն:

Հնագույն գրավոր աղբյուրներում ևս հանդիպում ենք փաստերի, երբ «ար»-ը հանդես է գալիս «հար» ձևով: Այսպես. Խորենացու վերոհիշյալ աշխատության մեջ արդեն հանդիպել ենք ՀԱՐՔ ձևին, իսկ պարսից Դարեհ 1-ին արքայի (մ. թ. ա. 522—485 թթ.) Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ էլամական բնագիրը Հայաստանի համար օգտագործում է ՀԱՐՄԻՆՈՒՅԱ ձևը (պարսկերեն ԱՐՄԵՆԻԱ, աքադերեն ՈՒՐԱՐՏՈՒ): Նույն արձանագրության մեջ դարձյալ էլամական բնագիրը հին պարսկերեն *aria* ձևի համար օգտագործում է *harri* ձևը: Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում մ. թ. ա. 2-րդ հազ. կեսերին ստեղծված պետական կազմավորումներից մեկի՝ ՀԱՐԻ—ՄԻտանի (նաև Խարի-Միտանի)⁵⁹ երկրի բնակիչները իրենք իրենց անվանում էին հարի մարդիկ, իսկ երկիրը՝ ՀԱՐԻ երկիր⁶⁰:

Ինչպես տեսնում ենք, միանգամայն հնարավոր էր, որ մեր նախնիները իրենք իրենց կոչեին ար-հար: Այս դեպքում ճիշտ հետևության է հանգել Մ. Գավուքչյանը եզրակացնելով, որ ավելի ուշ հար անվան «ր» հնչյունը դարձել է «լ»: հայ և Հայք, որն ավելի բարեհնչյուն էր, և հեշտ էր արտասանվում:

Արդեն ճշվել է, որ Խորենացին օգտագործել է ԱՐԱՐԱԴԻ

⁵⁹ Ուսումնասիրողները (Վինբլեր, Վայնդներ, Սմիթ, Գյոցե, Ա. Խաչատրյան) Հարի-Միտանին տեղադրում են Վանա լճի շրջակայքում և ավելի հարավ: Ա. Խաչատրյան, ճշվ. աշխ., էջ 178

⁶⁰ Ա. Խաչատրյան, ճշվ. աշխ., էջ 169

երկիր (Վանա լճից հարավ), ՀԱՐՔ (Վանա լճից հյուսիս-արևմուտք), ՀԱՅՔ՝ (Վանա լճի շրջակայք, այնուհետև ամբողջ Հայկական լեռնաշխարհ) և ԱՐՄԵՆԻԱ անունները: Նկատում ենք, որ այս բոլոր անունների մեջ առկա է ԱՐ աստծո անունը: Կարելի է ենթադրել, որ Խորենացու հիշատակած ՀԱՐՔԸ ոչ թե հայրերի երկիր է նշանակում, ինչպես բացատրում է պատմահայրը, այլ պարզապես աշխարհագրական անուն է, երկրանուն⁶¹:

Այս դեպքում մեկ անգամ ևս համոզվում ենք, որ «արը» հանդես է գալիս նաև «հար» ձևով: Ուշադրություն դարձնենք նաև Խորենացու այն վկայությանը, որ Հայկը հեռանալով Բաբելոնից բնակություն է հաստատել ԱՐԱՐԱԴԻ երկրում (շումերական դյուցազնավեպում ԱՐԱՍՏՏԱ, մ. թ ա. 4—3-րդ հազարամյակներ), որեմն արդեն կար ԱՐԱՐԱՏ կոչվող երկիրը: Եթե ընդունենք, որ ՀԱՐՔՆ էլ երկրանուն է, որեմն ԱՐԱՐԱՏ, ՀԱՐՔ անունները նախորդում են ՀԱՅՔԻՆ: Իսկ Հայկ նահապետը, որ ամենայն հավանականությամբ եղել է իրական անձ, աչքի է ընկել իր քաջությամբ, ազնվությամբ ու շիտակությամբ, խոր հետք է թողել ժողովրդի հիշողության մեջ: Դա էլ հիմք է տվել Մար Աբասին, Խորենացուն և մյուս պատմիչներին Հայկին համարելու հայոց նախնին: Հետևաբար կարելի է ասել, որ Հայկ անունը ծագել է մեր ժողովրդի հայ անունից և ոչ թե հակառակը:

ԱՐ աստծո անունով հարևանները ևս Հայկական լեռնաշխարհի բնակիչներին անվանել են արմեն, արման, որ նշանակել է արածին, արորդի, արիմարդ: Հնում «մա», «մե», հնդեվրոպական բառարմատները ունեցել են սերել, ծնել (նաև սերված, ծնված) իմաստը:

Ման բառը հնդեվրոպական որոշ լեզուներում հենց մարդ իմաստն ունի: Անգլերենում man նշանակում է մարդ, հայերենում պահպանվել է մանուկ բառը, որ փոքր մարդ իմաստն ունի (ուկ վերջածանցը փոքրացուցիչ է): Նույն

⁶¹ Ն. Դոլենք, Ա. Խաչատրյանը, Պ. Եանցընը ևս ենթադրում են, որ Հարքը կարող էր երկրանուն լինել (Դոլեն, Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 13):

«մա» արմատից են առաջացել հայերեն մայր, մարդ, պարսկերեն մադար, մարդ, անգլերեն mother, ռուսերեն мать, ֆրանսերեն maman, իսպաներեն madre արմատական բառերը և այլն:

Այսպիսով մեր ժողովրդի հայ և արմեն (նաև արիներ) անվանումները կապված են ցեղի հնագույն ԱՐ աստծո անվան հետ: ԱՐ աստծո անունով է կոչվել նաև ցեղի բնօրրանը՝ ԱՐԱՐՍՏ, ՀԱՐՔ-ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ:

Այժմ տեսնենք թե Հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում ստեղծված պետական կազմավորումները ինչ հերթականությամբ ու ինչ անուններով են մեզ հասել:

— Աշխարհի հնագույն պետություններից մեկի՝ Շումերի բնակիչները Հայաստանի համար օգտագործել են ԱՐՍՏՏԱ անունը (մ. թ. ա. 4—3-րդ հազ.):

— Խորենացին օգտագործել է ԱՐԱՐԱԴԻ երկիր, ՀԱՐՔ-ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ անունները (մ. թ. ա. 3-րդ հազ. կես.):

— Աքադի թագավոր Նարամ-սինը օգտագործել է ԱՐՄԱՆԻ երկիր անունը (մ. թ. ա. 3-րդ հազ. կես.):

— Խեթական թագավորները օգտագործում են ՀԱՅԱՍՍԱ և ՀԱՅԱՍԱ-ԱԶԶԻ անունները (մ. թ. ա. 2-րդ հազ. կես.):

— Մ. թ. ա. 13-րդ դարից Ասորեստանի թագավորները օգտագործում են ՆԱԻՐԻ անունը⁶²:

— Ասորեստանի թագավոր Ադադնիրարի 2-րդի (մ. թ. ա. 911—890 թթ.) արձանագրության մեջ, որ գրված է աքադերեն, երևան են գալիս ՈՒՐԱՇՏՈՒ, ՈՒՐԱՐՏՈՒ, ՈՒՐՈՒԱՏՐԻ անունները⁶³:

— Վանի թագավորության արքաների արձանագրություններում (մ. թ. ա. 9-րդ դարից) երևան է գալիս ԲԻԱՅ-

⁶² Ընդունված է, որ ՆԱԻՐԻ նշանակում է գետերի երկիր, սակայն Մ. Գավուքչյանը գտնում է, որ ՆԱԻՐԻ նշանակում է կրակի (արև) երկիր: Գավուքչյան, նշվ. աշխ., էջ 178—179

⁶³ Լ. Ծահինյանը «Ուրարտու» ստեղծվածը աշխատության մեջ բազմաթիվ փաստերով հիմնավորապես ապացուցում է, որ ասորական թագավորների հիշատակած ՈՒՐԱՇՏՈՒ, ՈՒՐԱՐՏՈՒ, ՈՒՐՈՒԱՏՐԻ երկիրը ԱՐԱՐՍՏԻ երկիրն է, ՀԱՅԱՍՏԱՆԸ:

ՆԱ անունը, որն ստանց վերջին «ա» հնչյունի կարդացվում է ԲԻԱՅՆ, Վանի բարբառով ՎԻԱՆ: Այս դեպքում պետական կազմավորումը անվանվել է մայրաքաղաքի անունով և ճիշտ է ԲԻԱՅՆԱՆ ՎԱՆԻ թագավորություն կոչելը:

— Պարսից Դարեհ 1-ին թագավորի վերոհիշյալ արձանագրության մեջ Հայաստանի համար օգտագործվել են ԱՐՄԵՆԻԱ (հին պարսկերեն), ՈՒՐԱՐՏՈՒ (աքադերեն), ՀԱՐՄԻՆՈՒՅԱ (ելամերեն) անունները:

Հանդիպում ենք նաև ԱՐՄԵ-ՇՈՒՊՐԻԱ, ԷՐՄԱՆԻ և այլ անունների: Այս բոլոր անունները նույն ցեղի, նույն ժողովրդի տարբեր անվանումներն են: Ինչպես տեսնում ենք մեր երկրի հնագույն անունները ԱՐԱՏՏԱՆ և ԱՐԱՐԱԴՆ են, որոնք կազմված են ԱՐ և առ բաղադրիչներից: Այստեղ «ԱՐ»-ը անկասկած արևի ԱՐ աստծո անունն է, իսկ «առ»-ը հալխանաբար տեղանվան իմաստ ունի:

Հետևաբար կարող ենք ասել, որ մեր երկրի ու ժողովրդի հնագույն անունները կապված են ԱՐ աստծո անվան հետ, ու ճիշտ է նաև Հայկական լեոնաշխարհը ԱՐԱՐԱՏ կամ ԱՐԱՐԱՏՅԱՆ աշխարհ կոչելը:

Այսպիսով Հայկական լեոնաշխարհը, որտեղ ստեղծված պետական կազմավորումները հայտնի էին ԱՐԱՏՏԱ, ԱՐԱՐԱԴ, ՀԱՐՔ-ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ անուններով բնակեցված էր ԱՐ աստծուն պաշտող հայ (ար-հար), արմեն ցեղի մարդկանցով: Եվ բոլորովին պարտադիր չէր, որ Հայկական լեոնաշխարհի ամբողջ տարածքը միաժամանակ ընդգրկվեր մեկ պետական կազմավորման մեջ: Նշենք նաև, որ Հայկական լեոնաշխարհի ցեղերը միմյանցից բաժանված էին բարձր լեոներով, անդնդախոր ձորերով, կիրճերով, արագահոս գետերով ու անտառներով, որը դժվարացնում էր միմյանց հետ հաղորդակցվելը: Ուստի պետական կազմավորումներ կարող էին առաջանալ Հայկական լեոնաշխարհի այս կամ այն հատվածում: Ստեղծված պետությունը անպայման պետք է ցանկանար իր գերիշխանությունը տարածել ողջ ցեղի վրա, միավորելով նրանց: Այդպես էր Վանի թագավորության (Ուրարտու) ժամանակ, երբ Վանի արքաները փորձում էին միավորել Արարատի ցեղերին: Վանի արքաներից հետո մեր թվարկության սկզբներին մեծ հաջողու-

թյան հասարակ Տիգրան Մեծը (մ. թ. ա. 95— մ. թ. ա. 55 թթ.), որին հաջողվեց միավորել Հայկական լեռնաշխարհի բոլոր մեծ ու փոքր ինքնիշխան պետական կազմավորումներին ու ցեղերին և ստեղծել հզոր պետություն: Հիշենք, որ ունեցել ենք Սյունիքի, Լոռու, Կարսի, Աղվանքի թագավորություններ, ինչպես նաև Ղարաբաղի մելիքություն: Տարբերությունն այն է, որ Վանի թագավորությունը և Տիգրան Մեծի ստեղծած պետությունը հզորանալով ընդգրկել են ամբողջ Մեծ Հայքը:

Այսպիսով նախապատմական ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերը ունեցել են արեգակնային ԱՐ աստծո պաշտամունք, որի անունով այդ ցեղերը կոչվել են հայ (ար-հար) և արմեն, իսկ ընդարձակ տարածքը, ուր ապրում էին հայ-արմենները կոչվել է ԱՐԱՐԱՏ, ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ:

ԱՐ ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆԵՐՈՒՄ

Աշխարհի ոչ մի երկրում հնարավոր չէ հանդիպել «ար»-ով սկսվող անձնական ու աշխարհագրական այնքան անունների, որքան Հայաստանում: Գրավոր հիշատակված «ար»-ով սկսվող անձնական անունների հանդիպում ենք մ. թ. ա. 2-րդ հազարամյակից սկսած: Դրանք Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված պետություններից մեկի՝ ՀԱՐԻ-ՄԻՏԱՆԻ երկրի արքաների, անուններն են, որոնք մեզ են հասել Թել-Էլ-Ամսունայի (Եգիպտոս) և Բողազքյոյի (Թուրքիա) արքունական դիվանների հայտնաբերման շրջոքից: Ահա այդ անուններից մի քանիսը՝ Արուստամա, Արուաշումարա, Արուամանյա: Այդ անունները գրված են արադ-բաբելական լեզվով ու ստպագրերով, որը ազդել է անվան ճիշտ գրության ու արտասանության վրա, քանի որ անունները հարմարեցվել են օտար լեզվի ու ստպագրերի:

Խորեմացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ հիշատակված են 11 հայ նահապետների անուններ, որոնցից 5-ը սկսվում են ԱՐ-ով: Ահա այդ անունները. Արա-

մանյակ, Արամայիս, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ: Այնուհետև հիշատակված են Արտավազդ, Արտաշես, Արիոբարզան, Արշակ, Արշամ, Արտավան, Արքեղայոս, Արշավիր, Արտաշիր անունները և այլն:

Վանի թագավորության արքաների արձանագրություններում հանդիպում ենք Արամե, Արգիշտի, Էրիմենա անուններին: Վերոհիշյալ բոլոր անուններին ավելացնենք Արտակ, Արամազդ, Արսեն, Արսենակ, Արտեմ, Արտան, Արգամ, Արսեն, Արեգ, Արբակ, Արծրուն, Արմանուշ, Արիի անունները և այլն⁶⁴:

ԱՐ աստծո անունով են կոչվել ոչ միայն ցեղն ու բնօրանը, այլև Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ աշխարհագրական անուններ՝ գետեր, լեռներ, ավաններ, շեներ ու քաղաքներ: Թվարկենք դրանք. Արարատ, Արագած, Արաքս, Արածանի, Արեգունի, Արտազ, Արենի, Արմավիր, Արտաշատ, Արճեշ, Արուն, Արցախ, Արտամետ, Արմաշ, Արծն, Աան Երիզա, Երզնկա, Երևան և այլն:

Հայ և օտար ուսումնասիրողներին հատկապես հետաքրքրել է հայոց 13-րդ մայրաքաղաքի Երևան անունը: Գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ, որտեղ հեղինակները տարբեր բացատրություններ են տվել Երևան անվանը:

Այժմ նորից անդրադառնանք այդ հարցին և փորձենք նորովի մեկնաբանել Երևան անվան ծագումը:

ԱՐ ԱՍՏՎԱԾԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է: Նրա տարածքում կատարված հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ հնագույն մարդը այստեղ ապրել է տասնյակ հազարավոր տարիներ առաջ:

⁶⁴ Սլավոնական բազմաթիվ հնագույն անուններ ևս սկսվում են ՅԱՐ արմատով — Յարուլավ, Յարուպոլկ, Յարիգա, Յարըի, Յարովոյ և այլն:

Հատկանշական է այն փաստը, որ Երևանի տարածքը անբերդիատ բնակեցված է եղել: Ուսումնասիրությունները պարզել են, որ սկսած մարդկային հասարակության խոր անցյալից մինչև մեր օրերը քաղաքի տարածքում տարբեր ժամանակներում ստաչացել ու տարբեր պատճառներիով կործանվել են բազմաթիվ բնակատեղեր:

Ժամանակագրական առումով քաղաքի տարածքում հայտնաբերված հնագույն բնակավայրը Երևանյան կամ Հրազդանյան քարայրն է (Երևանյան լճի մոտակայքում, Հրազդան գետի ափին): Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նյութական մշակույթի 5—6 շերտ, որոնցից հընագույնը թվագրվում է հին քարե դարի մուստերյան շրջանով (100 000—40 000 տարի առաջ):

Այնուհետև Երևանի տարածքում մարդու բնակության հետքերը հայտնաբերվում են նոր բնակավայրերում, ստեղծելով պատմական հուշարձանների մի ամբողջական շրջա: Ահա դրանք. Ծենգավիթ (մ. թ. ա. 4—2-րդ հազ.), Ծիծեռնակաբերդ, Կայարանամերձ հրապարակ. (մ. թ. ա. 2-րդ հազ.), Արին բերդ (Էրեբունի), Կարմիր բլուր (մ. թ. ա. 1-ին հազ.), Ավան-Առինջ (մ. թ. ա. 2—1 դդ.), Կարմիր բերդ (մ. թ. 1—10-րդ դդ.), Երևանի բերդ (մ. թ. 7-րդ, 16-րդ դդ.), և այլն:

Ուսումնասիրողներին Երևանը հետաքրքրել է հատկապես իր անվամբ: Մեզ են հասել Երևան անվան բազմաթիվ տարբերակներ: Հիշատակենք դրանք. Երեան, Արիվան, Արեան, Էրիվան, Էրեվան, Էրեվան, Բեվան և այլն:

Գոյություն ունեն Երևան անունը մեկնող բազմաթիվ բացատրություններ ու ավանդություններ: Ամենահին ու ամենատարածված բացատրությունը կապված է Նոյ նահապետի անվան հետ: Ժողովրդի մեջ պահպանված մի ավանդության համաձայն, ջրհեղեղից հետո, երբ ջրերը հետ են քաշվել, Նոյ նահապետը Արարատ սարից տեսել է ցամաք ու բացականչել «Երևաց, երևաց», որն էլ հետագայում ձևափոխվելով դարձել է Երևան:

Ուսումնասիրողներից ոմանք (Մ. Զամչյան, Հ. Նալյան) Երևան անվան ծագումը կապել են Երվանդյան հարըս-

տության վերջին թագավոր Երվանդի (մոտ. 220—201 թթ. մ. թ. ա.) անվան հետ:

Բացատրությունների այս շարքում պարզապես կարելի էր անտեսել թուրք-պարսկական մի պլանդություն, ըստ որի Երևան անունը ծագել է պարսիկ Ռևան-Ղուլի խանի անունից: Այս պլանդությունը սակայն ժամանակ առ ժամանակ փորձում են չարաշահել հատկապես ադրբեջանցի պատմաբանները, բայց դա անընդունելի է հենց միայն այն պատճառով, որ Ռևան-Ղուլի խանը Երևանում իշխել է 16-րդ դարի սկզբներին, իսկ Երևան անունը հազարամյակների պատմություն ունի:

19-րդ դարի վերջին Հայաստանի տարածքում հայտնաբերված Վանի թագավորության արքաների սեպագիր արձանագրությունների վերձանումը մի շարք աշխարհագրական անունների ճշգրտման ու նոր ձևով բացատրելու հրահարավորություն ընձեռեցին:

Արձանագրություններում ընթերցվում են Էրիանի, Էրիախի, Էրեբունի անունները:

Ռուսա 1-ին թագավորի (մ. թ. ա. 735—713 թթ), արձանագրության մեջ, որ հայտնաբերվել է Սևանա լճի մոտ գտնվող Ծովինար գյուղում²², այլ երկրանունների հետ հիշատակվում է նաև Էրիանի անունը: Ռուս հնագետ Մ. Նիկոլսկին Էրիանին տեղադրում է Երևանի տարածքում և Երևան անունը բխեցնում նրանից: Այս տեսակետը պաշտպանել են նաև Ե. Շահագիրը, Հ. Սանդալյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ:

Էրիանին տեղադրել են նաև Սևանա լճի շրջակայքում (Ի. Մեշյանինով, Գ. Մելիքիշվիլի, Գր. Ղափանցյան), այնուհետև Կումայրիի շրջակայքում և այլն: Գր. Ղափանցյանը Երևան անունը բխեցնելով Էրիա ցեղի անունից, միաժամանակ դա առեղծվածային է համարում, գտնելով, որ չպետք է անվերապահորեն ընդունել դա⁶⁵:

1951 թ. Արին բերդ բլուրի պեղումների ժամանակ (աշխ. դեկավարներ՝ Բ. Պիտրովսկի, Կ. Հովհաննիսյան) հայտնաբերվել են երկու սեպագիր արձանագրություններ, որոնց

⁶⁵ Եր. համալսարան, «Գիտ. աշխատություններ, 1940, հտ. 14, էջ

վերծանումից պարզվել է, որ Արգիշտի 1-ին թագավորը (մ. թ. ա. 786—764 թթ.) մ թ ա. 782 թ. հիմնադրել է բերդ և կոչել Էրեբունի (ընթերցվում է նաև Իրբունի, Էրբունի, Իրպունի, Երեբունի):

Սա Երևան (Էրեբունի) անվան մեզ հայտնի հնագույն հիշատակությունն է գրավոր աղբյուրներում:

1950-ական թվականների կեսերից գերիշխող է դառնում այն տեսակետը (Բ. Պիոտրովսկի, Մ. Իսրայելյան, Կ. Հովհաննիսյան), որ Երևան անունը ծագել է Էրեբունի անունից, իսկ Մ. Իսրայելյանը կարծիք է հայտնում, որ Էրեբունի նշանակում է հաղթանակ⁶⁶:

Բոլոր այս բացատրությունները տարիներ շարունակ ընդունվել կամ մերժվել են ուսումնասիրողների կողմից:

Արդեն նշվել է, որ Հայաստանում բազմաթիվ բնակավայրեր կան, որ սկսվում են «ար» արմատով, որը ԱՐ աստծո անվան հետ է կապվում: Մի քիչ ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ Արիվան, Էրիվան, Երևան անունները ևս կապված են ԱՐ աստծո անվան հետ:

Հայկական լեոնաշխարհում բազմաթիվ բնակավայրեր կան, որ վերջանում են «վան» բառով. Վան, Նախիջևան, Իջևան, Դիցավան, Սեվան, Օթելվան, Ավան, Վանք և այլն: Բոլոր այս դեպքերում «վանը» տեղի, բնակավայրի իմաստ ունի: ԵՐԵՎԱՆ անվան մեջ ևս հանդիպում ենք «վան» բառին (բաղադրիչ), իսկ ԱՐ-ԷՐ արմատը արդեն մեզ ծանոթ ԱՐ աստծո անունն է: ԱՐ-ԷՐ անցումների բազմաթիվ օրինակներ կան հայերենում. Արգրում-Էրգրում, Արաքս-Երասխ, Արիմենա-Էրիմենա, և այլն:

Հետևաբար Արիվան, Էրիվան, Երեվան անունները կազմված են ԱՐ-ԷՐ և «վան» բաղադրիչներից, որն ԱՐ աստծուն պաշտող մարդկանց՝ արիների բնակավայր (բաղաք) իմաստն ունի, կամ տեղ, ուր ապրում են արիներ:

Այսպիսով հայոց մայրաքաղաքի անունը ևս կապված է Հայկական լեոնաշխարհի բնիկների՝ հայ-արիների հնագույն ԱՐ աստծո անվան հետ, ինչպես ԱՐԱՐԱՏԸ, ՀԱՅՔԸ, ԱՐՄԵՆԻԱՆ և մյուս անունները:

⁶⁶ 44 «Հայրենիքի ձայն» (շաբաթաթերթ), 30. 01. 1966 թ.

ԱՐ ԱՍՏԾՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հնագույն աստվածների պաշտամունքների պատմության ուսումնասիրման համար մեծ է ազգագրության և հատկապես ժողովրդական բանահյուսության դերը: Եթե հողը և բնությունը պահպանել ու մեզ են հասցրել արևի պատկերով նշանակալի մշակույթի շատ արժեքներ, ապա հարատևվող ժողովրդի հիշողությունն էլ մեզ է հասցրել արևի պաշտամունքի հետ կապված ժողովրդական ավանդություններ, գրույցներ, հեքիաթներ, հանելուկներ, ասացվածքներ, առակներ, երգեր, պարեր (շորջպար), ծեսեր, աղոթքներ, անեծքներ, երդումներ և այլն:

Ժողովրդական բանահյուսության հրաշալի նմուշ է հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպը, որը ստեղծվել է հազարամյակներ առաջ: Չնայած «Սասնա ծռերը» գրի է առնվել 19-րդ դարում, Գ. Սրվանձտյանի կողմից, Մուշում, սակայն զգացվում է, որ այն խոր հնություն ունի: Տիեզերական ուժեր մարմնավորող Սասնա դյուցազունները իրենց հրեղեն-ջրածին ձիու՝ Բուռլիկ-Չալալիի հետ թռչում հասնում են մինչև արևի գունդը, իջնում երկիր, ընկղմվում ծովի հատակը: Ստացվում էր տիեզերական պտույտ (օղ, հող, ջուր):

Արդեն նշվել է, որ գոյություն է ունեցել հնդեվրոպացիների (արիներ) ընդհանուր մի մշակույթ, որից սնվել են բոլոր արիական ցեղերը: Դա երևան է գալիս, երբ համեմատվում են հնագույն առասպելներն ու գրույցները: Համեմատության եզրեր ունեն մ. թ. ա. 3-րդ հազարամյակում ստեղծված շումեր-աքադական դյուցազնավեպի հերոսներ Գիլգամիշ-Էնկիդուն և հայոց դյուցազնավեպի հերոսներ Սանասար-Բաղդասարը: Նրանք բոլորն էլ անհաշտ են չարի նկատմամբ և պայքարում են բարու հաղթանակի համար:

Նմանություններ կան նաև Սանասար-Բաղդասարի ու հոմերական Հոոմուլոս-Հոեմոսի միջև: Հայ երկվորյակները հիմնում են Սասուն քաղաքը, իսկ հոմերացի երկվորյակները՝ Հոոմը:

Հայ երկվորյակ եղբայրներ Սանասարն ու Բաղդասարը

ծնվել են Մովհնարից, որ հղիացել էր շրից (չորս խմելով),
իսկ հնդկական Ռամայանա էպոսում Ռամի ու Երա եղ-
բայրների մայրերը հղիանում են աստվածային խմիչք ըմ-
պելով:

Հայոց հնագույն ԱՐ աստծուն ավելի ուշ շրջանում փո-
խարհնաձ Միհր աստծո նկարագրի շատ հատկանիշների
հանդիպում ենք «Սասնա ծռերի» հայտնի դյուցազուններ
Մեծ Մհերի ու Փոքր Մհերի կերպարներում: Մեծ Մհերը
մարմնավորում է արեգակն ու կրակը, իսկ Փոքր Մհերը՝
մահվան ու հարության գաղափարը (ԱՐ աստվածը արևի,
մեռնող-հառնող բնության, գարնան ու զարթոնքի աստվածն
էր): «Սասնա ծռերում» Մհեր-արև աստվածը կրում է առ-
յուծաձև, առյուծասպան մականունը: Վերջին մականունը
ցույց է տալիս, որ արևի մարդակերպ աստվածը դուրս է
մղում իր կենդանակերպ զուգակցին¹:

Արևային գծեր ունի «Սասնա ծռերի» հերոսուհիներից
մեկը ևս՝ քառսուն Դեղձուն ճյուղ ծամը, որի մագերի գույնը
և ճոխությունը հիշեցնում են արևը և արևի ճառագայթ-
ները:

Արևի պաշտամունքի հետքերը նկատելի են հատկապես
ժողովրդական գրույցներում, հեքիաթներում, երգերում ու
այլ բանահյուսական նմուշներում: Բանահյուսական նյու-
թեր հավաքվել են պատմական Հայաստանի շատ գավառ-
ներում, սակայն որոշ գավառներ կամ դուրս են մնացել
ազգագրագետների տեսադաշտից, կամ վատ են ուսումնա-
սիրվել: Ներկայացվող բանահյուսական նյութերի որոշ մա-
սը հավաքվել է Գանձակի շրջանում (Բանանց գյուղ) մինչև
1990-ական թվականները:

Այսպես, ըստ տարածված մի գրույցի, Արևն ու Լուսինը
քույր ու եղբայր են: Մի օր քույր Արևը ասում է, որ ինքը
գիշերները վախենում է երկնքում ման գալուց, իսկ ցերեկ-
ները ամաչում է դուրս գալ, քանի որ իրեն նայում են: Լու-
սին եղբայրը որոշում է գիշերները ինքը շրջել ու լույս տալ
մարդկանց, իսկ ցերեկները՝ Արև քույրիկը: Սակայն խոր-

¹ Հ. Իսրայելյան, Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան
Հայաստանում, Լրաբեր (հանդես) թիվ 4, 1967, էջ 83

հոբոյ է տալիս քույրիկին, որ իր հետ մի բոռ ասեղ վերցնի ու ծակծկի իրեն նաչողների աչքերը, որպէսզի չտեսնեն իր մերկությունը (Բանասց):

Կամ. Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են և իրենց մոր հետ ապրում են երկնքում: Մի անգամ, երբ մայրը խմոր էր հունցում, Լուսինը զայրացնում է նրան և նա խմորոտ ձեռքով ապտակում է Լուսին, որի հետքերը մինչև օրս մնում են նրա այտին (Բանասց):

Նոր Բաշագետի գավառում տարածված էր նույն գրույցի մէկ այլ տարբերակ. Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են: Քույր Արևը ամաչկոտ է, վախկոտ, այդ պատճառով էլ երկու պահապան հրեշտակ ունի, որոնք ցերեկը երկրի երեսով, իսկ գիշերը՝ տակով ման են ածում նրան²:

Ինչպէս տեսնում ենք ժողովրդական գրույցներում արեգակն ու լուսինը հաճախ են հանդես գալիս միասին: Լուսինը հիմնականում արական սեռ է, արեգակը՝ իգական: Որոշ գավառներում ընդհակառակն է:

Հայաստանում պատրաստվել են նաև արեգակի ու լուսնի մարդակերպ արձաններ: Մ. Խորենացին վկայում է, որ Արշակունի Վաղարշակ 1-ին թագավորը (134—112 թթ.) «Մեհեան շինեալ յԱրմավիր՝ անդինս հաստատէ արեգական և լուսնի և իրոց նախնեացն»³: Մեզ է հասել լուսնի արական աստվածության պատկերը Փառնակ անունով: Պոնտոսում և Վրաստանում ևս լուսնի աստվածը կոչվել է Փառնակ:

Հետաքրքիր է հայկական ժողովրդական մի գրույց, ըստ որի արևը նստած առյուծի մէջքին սլանում է երկնականարով և երեկոյան հանգստանում մոր գրկում:

Առյուծը իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից⁴: Հիշենք Էրեբունի ամրոցի որմնակարներից մեկը, որտեղ Հալոյ աստվածը կանգնած է առյուծի մէջքին:

Հայտնի է, որ ժողովրդական հավատալիքների համաձայն արևը իր շրջապտույտը կատարում է հրեղեն ձիեր

² Ազգագրական հանդես, գիրք 15, թիվ 1, 1908 թ.

³ Մ. Խորենացի, նշվ. աշխատություն, էջ 133

⁴ Ազգագրական հանդես, գիրք Բ, 1897 թ. էջ 216

ճված կառքով: Ընդհանրապես հրեղեն ձիուն շատ ենք
Բանդիպում հայկական ժողովրդական հեքիաթներում և
գրույցներում: Այսպես, հրեղեն ձին հեքիաթի հերոսին ծովի
մի ափից մյուս ափն է թոցնում կամ ծովից՝ մինչև արևը և
այլն, իսկ արևը ծովում լողանալով նորից ուժեղանում և
երիտասարդանում էր:

Մ. Աբեղյանը Վանի շրջանում գրի է առել հրաշալի մի
չրույց արևի մասին, որտեղ շատ գեղեցիկ ներկայացված է
արևը արևամուտից հետո և արևածագից առաջ: Ահա այդ
գրույցը: Արեգակը երեկոյան մայր է մտնում Վանա ծովում
լողանում է, որպեսզի օրվա պտույտից հետո հանգստանա:
Հավատում են, որ նրա մահիճը գտնվում է լճի հատակում
փրփուրների վրա, իսկ ձյունաթույր ու շառագույն ամպերը
արևի անշարանի վարագույրներն են: Արևածագից առաջ
հրեշտակներն արևին հագցնում են հրեղեն զգեստներ և
հարդարում մահիճը: Երբ արևը լվանում է երեսը՝ սարերն ու
դաշտերը ջրի ցողով են ցողվում: Թռչունները քնից վեր են
թռչում և սկսում են ծլվլալ: Արևելքում՝ բարձր լեռներից
սկզբում դուրս են գալիս Արև արքայի 12 թիկնապահները,
որոնք իրենց գլուխներն են խոնարհում Արև արքայի առաջ:
Այն ժամանակ արևը հանկարծ ցույց է տալիս հրեղեն վար-
սերով շրջափակված ոսկե գլուխը, ողջունում է ողջ բնու-
թյանը և բարձրանում երկնականամար⁵:

Արև արքայի 12 թիկնապահները հավանաբար տարվա
12 ամիսներն են:

Ժողովրդի մեջ արևածագի այս պահը սուրբ, արդար ժամ
է համարվել, երբ կարելի էր ցանկություն, փափագ արտա-
հայտել այն կատարված տեսնելու ակնկալիքով:

Այս երևույթը պահպանվել է մինչև մեր օրերը: Այսպես.
Բանանցում արևածագին, երբ երևում էին արեգակի առա-
ջին անաագայթները, կանայք ծնկի էին գալիս ու աղոթում.
«Աստծո ցնծուղն տված ըրիգնակ, իմ էրէսը քու ոտի տակ,
դու իմ հիվանդին լավացրու» կամ «Այ սուրբ ըրեգնակ իմ
էրէսը քու ոտի տակ, դու օգնի իմ բալին» և այլն:

Նոր Բայագետում առավոտյան աղոթելիս արբերին դի-

⁵ Մ. Աբեղյան, Երկեր, հտ է, Երևան, 1975 թ., էջ 41

մերոց հետո դառնում էին դեպի արեգակը և ասում. «Ո՛ր
մերը մեր արեգակ, դու հասնիս օգնության»⁶:

Լոռիում, երբ էրեխան ծնվում էր, տատները բարուրը
դուրս էր բերում, դառնում դեպի արևելք և ասում. «Սուրբ
րեգնակ, էս էրէխի փայլ տաս, երկնքիցը ցօղ ցողայ, գետ-
նիցը պտուղ ստանայ, մենք էլ մեղավորներս, սրա շուքումը
ուտենք, կերակրուինք»⁷:

Բանակցում ծանր հիվանդին փրկելու համար հարա-
զատներից մեկը (մայրը, տատը) արևի ճառագայթների հետ
ծնկի էր գալիս և դիմելով նրան (արևին) խնդրում էր օգ-
նել իր հիվանդին, խոստանալով զոհ մատուցել՝ մատաղ
անել: Այս դեպքում հին ու նոր կրոնները (Արև, Քրիստոս)
խառնվել են, հին հավատը չի մոռացվել, բայց նորն են
պաշտում (մատաղը արվում էր եկեղեցում):

Այս առումով հետաքրքիր է մի անեծք. «Հին ըրեգնակը
դառնա քո տունը» (Բանակց): Հավանաբար այս անեծքը
նկատի ունի այն, որ քրիստոնեության ժամանակ քանդվել
են արևի տաճարները (տունը): Երբ մեկի արտը լավ բերք
է տվել, ասել են. «Ըրեգնակը թինկնա տվել (թիկնել է) ար-
տում (Բանակց): Սովորություն է եղել նաև մահացող մար-
դուն շրջել դեպի արևը, որ չտանջվի և հոգին շուտ ավան-
դի (Բանակց):

Նոր Բայազետի գավառում լուսնին քեռի էին կոչում,
հետևաբար կանչողը իրեն արևորդի է համարել⁸:

Աշխարհի ոչ մի ժողովուրդ արևով երդվելու այնքան
օրինակներ չունի, որքան հայ ժողովուրդը. իմ արև, հորս
արև, մորս արև, որդուս արև, արևս վկա, արևդ սիրեմ,
արևիդ մեռնեմ, արևդ սիրես...: Այդպես են երդվել մեր
նախնիները հազարավոր տարիներ առաջ, այդպես են երդ-
վում նաև այժմ: Հայտնի է, որ հայոց Վաղարշակ 1-ին թա-
գավորի գորապետ Բարզափրանը «դաշանց հարստութեան
համար՝ նախ կերդնու յԱրեգակն, յետոյ ամենայն երկնա-
ւոր և երկրաւոր պաշտելեաց»⁹:

⁶ Ազգ. հանդես, գիրք 17, 1, 1908 թ., էջ 94

⁷ Ազգ. հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 199

⁸ Ազգ. հանդես, գիրք 17, 1, 1908 թ., էջ 94

⁹ Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 97

գորիս, Երևան, Խարբերդ, Կարին, Արցախ, Նոր Նախիջևան, Ճամխոր, Պոլիս, Ռոդոսթոն, Սերաստիա), որե՛վ (Սալմաստ), արիվ (Ագուլիս, Ջեյթուն, Համշեն, Թիֆլիս), այել (Հանն)¹⁶:

Հր Աճառյանը ներկայացնում է նաև թե ինչպես է կոչվում արև բառը հնդեվրոպական տարբեր լեզուներում. ravi (վեդաներ), rev (հնդեվրոպական նախալեզու), raudas (լիտվերեն), rot (հին, բարձր գերմաներեն), rauos (գոթերեն), ruad (իռլանդերեն), arka (սանսկրիտ), արեգակ, rev (պարսկերեն), aurv (գեղերեն), eakr (իռլանդերեն) և այլն¹⁷:

Արև բառը ուսումնասիրողները բացատրում են այսպես. 1843 թ. Պոլսի «Արշալույս Արարատյան» թերթում գրված է. «Արև բառը կազմված է ար-հուր արմատից, և-ը առավելական է»¹⁸:

Մլակ (Էդվարդ) Կակոսյանը գտնում է, որ արևը կազմված է «ար» (արարում, գորություն) և «ակ» (կյանք) արմատներից, ար-ակ, արչակ (արև), այսինքն Կենաց գորություն, Կենաց արարում¹⁹:

Հայ պատմագրության մեջ փորձեր են արվել բացատրելու նաև արեգակ բառի իմաստը: Սամուել Կամրջաձորեցին (10-րդ դար) իր «Տոնական բանից» աշխատության մեջ գրում է. «Արեգակն անուանեցաւ, այսինքն լուսոյ ակն»²⁰:

Վանական վարդապետը իր «Տարեմուտ» գրքում մեկնաբանում է այսպես. «Արեգակն, մեծ ակն ասի, կամ տուրնչեան ասող, կամ լուսոյ ակն»:

Վարդան վարդապետ պատմիչը Սաղմոսաց մեկնության մեջ գրում է. «Արեգակն, լուսոյ ակն զի լուսոյն սեռն և լրստակ լույսն ի նմա է»:

Մխիթար Աբալի «Բառգիրք Հայկազյան լեզվի» և «Նոր

¹⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 313

¹⁷ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 311

¹⁸ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 311

¹⁹ Ս. Կակոսյան, Հայոց լեզվի խորհրդարան, էջ 14, անտիպ

²⁰ Մեջբերումները Հ. Աճառյանի նշված աշխատությունից են

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփեցից:¹³
(Գոհար վարդը վառվում էր
Արևի վեհ վարսերից)

(Թարգմ. գրաք-ից Վ. Գևորգյանի)

Ն. Ընորհալին նաև արեգակի ծնունդը և մահը պատկերող գեղեցիկ հանելուկ է առաջարկում.

Տեսի գմանուկ մի օր ծնաներ,
Եւ ի նոյն օրն մեռաներ
Յետ թաղելոյն դարձեալ յառներ
Ի այլ գեղեցիկ զինքն ցուցաներ:

Հետաքրքիր է նաև արևին ուղղված մի աղոթք.

Աշխարհին՝ խեր ու խաղաղութեն,
Թագաւորներուն՝ բարիշնութեն,
Հացին յէծանութեն
Իմ տղեկներուն արևշատութեն
Իմ հոգուն արքայութեն:¹⁴

Հայերը տիեզերական այս մեծ լուսատուի համար օգտագործում են արեգակ և արև բառերը:

Այժմ տեսնենք թե ինչպես են կոչել արեգակը Հայաստանի տարբեր գավառներում: Արեգա՛կ (Նոր Ջուղա), արեգա՛կ (Կարնո բարբառ), արե՛գագ (Թիֆլիս), արեքագ (Մուշավա), արեքակ (Երևան), արեքագ (Խարբերդ, Նոր Նախիջևան, Ռոդոսթո), արել-արեքագ (Պոլիս), արեգ՛ոկ, յերգ՛ոկ (Ոգմի ենթաբարբառ), արեկ՛ոկ, (Վան), արեքագ (Տիգրանակերտ), արիգ՛օգ (Զեյթուն), էրեկ՛ոկ (Մոկս), ըրե՛քնակ (Գորիս, Գանձակ), ըրի՛քնակ, ըրի՛ննակ (Արցախ), ըրա՛յնակ, արեքա՛ք (Ագուլիս)¹⁵:

Արև բառը ևս տարբեր գավառներում տարբեր ձևով է հնչում. արել (Ալաշկերտ, Մուշ, Ջուղա, Վան), արել (Ակն,

¹³ Մարգարիտներ հայ բնաբերգության, էջ 56

¹⁴ Վ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 80

¹⁵ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Երևան, 1971 թ., էջ 313

Գորիս, Երևան, Խարբերդ, Կարին, Արցախ, Նոր Նախիջե-
վան, Շամխոր, Պոլիս, Ռոդոսթոն, Սեբաստիա), որե՛վ (Սալ-
մաստ), արիվ (Ագուլիս, Զեյթուն, Համշեն, Թիֆլիս), այել
(Հանն)¹⁶:

Հր Աճառյանը ներկայացնում է նաև թե՛ հնչյալս է կոչ-
վում արև բառը հնդեվրոպական տարբեր լեզուներում.
ravi (վեդաներ), rev (հնդեվրոպական նախալեզու), raudas
(իտալերեն), rot (հին, բարձր գերմաներեն), rauos (գոթե-
րեն), ruad (իռլանդերեն), arka (սանսկրիտ), արեգակ,
rev (պարսկերեն), aurv (գեղերեն), eakr (իռլանդերեն)
և այլն¹⁷:

Արև բառը ուսումնասիրողները բացատրում են այսպես.
1843 թ. Պոլսի «Արշալույս Արարատյան» թերթում գրված է.
«Արև բառը կազմված է ար-հուր արմատից, և-ը առավե-
րական է»¹⁸:

Սլակ (Էդվարդ) Կակոսյանը գտնում է, որ արևը կազմը-
ված է «ար» (արարում, զորություն) և «ակ» (կյանք) ար-
մատներից, ար-ակ, արչակ (արև), այսինքն Կենաց զորու-
թյուն, Կենաց արարում¹⁹:

Հայ պատմագրության մեջ փորձեր են արվել բացատրե-
լու նաև արեգակ բառի իմաստը: Սամուել Կամրջաձորեցին
(10-րդ դար) իր «Տոնական բանից» աշխատության մեջ
գրում է. «Արեգակն անուանեցաւ, այսինքն լուսոյ ակն»²⁰:

Վանական վարդապետը իր «Տարեմուտ» գրքում մեկ-
նաբանում է այսպես. «Արեգակն, մեծ ակն ասի, կամ տու-
րնջեան ասող, կամ լուսոյ ակն»:

Վարդան վարդապետ պատմիչը Սաղմոսաց մեկնության
մեջ գրում է. «Արեգակն, լուսոյ ակն զի լուսոյն սեռն և լրս-
տակ լույսն ի նմա է»:

Մխիթար Աբալի «Բառգիրք Հայկազյան լեզվի» և «Նոր

¹⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 313

¹⁷ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 311

¹⁸ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 311

¹⁹ Ս. Կակոսյան, Հայոց լեզվի խորհրդարան, էջ 14, անոթիս

²⁰ Մեջբերումները Հ. Աճառյանի նշված աշխատությունից են

բառգիրք Հայկազյան լեզվի» աշխատության մեջ արեգակը բացատրում են իբրև «արևու ակ»:

Մ. Էմինը «Հայ հեթանոսական կրոնը» աշխատության մեջ արեգակը բացատրում է իբրև «արեգակի աչք»: Նա միաժամանակ համեմատություններ է անցկացնում այսպես. պարսիկները արեգակը համարում են Արամազդի աչքը, եգիպտացիները՝ Տիսիուրդուսի աջ աչքը, հույները՝ Դիուսի աչքը, գերմանները՝ Վուոդանի աչքը և այլն:

Ն. Ծնորհալին արեգակը կոչում է պայծառ կարկեհան (նոնաքար), իսկ հյուսիսային Գերմանիայի բնիկները՝ երկնքի գոհար:

Ղ. Ալիշանը ևս անդրադարձել է արեգակ բառի առուգաբանությանը. «Ինչպես աղբեր-ակն ջրոց բոխումն ցուցրնէ, սա ալ տաքութեան և լուսոյ»²¹:

Մ. Աբեղյանը գրում է. «Արևը, ասկայն, սկզբնապես ըմբռնվում է որպես մի լուսավոր քար, ինչպես ցույց է տալիս արեգակ (արեգ և ակն-թանկագին քար) բաղադրյալ բառը»²²:

Ինչպես տեսնում ենք, պատմիչներն ու ուսումնասիրողները հիմնականում ընդունում են, որ արեգակ նշանակում է լույսի, արևի ակն (աչք): Հետևաբար արևի ակն (աչքը)՝ արեգակը, կարելի է մեկնել որպես արևի աստված ԱՐ-ի ակ (աչք):

Ինչպես երևաց Մ. Էմինի բերած օրինակներից, այլ ժողովուրդների մոտ ևս այդպես էր, արեգակը համարվում էր աստծո աչքը: Իսկ եթե ի նկատի ունենանք, որ վերոհիշյալ օրինակներում եգիպտացիներից բացի, բոլոր ժողովուրդները հնդեվրոպացիներ են, որոնք ինչ-որ ձևով պահպանել են հուշեր նախահայրենիքից, ապա պարզ կդառնա, որ ճիշտ է արեգակը ԱՐ-ի ակ (աչք) մեկնելը: Իսկ եգիպտացիների հետ հազարամյակներ շարունակ մշակութային ու տնտեսական կապերի մեջ են եղել Հայկական լեռնաշխարհի բնակիչները:

Հայոց մեջ շատ խորն էր ու շատ տարածված արևի

²¹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 95

²² Մ. Աբեղյան, երկեր, հտ. է, Երևան, 1975 թ., էջ 40

պաշտամունքը: Արև աստծուն նվիրված արարողությունները կատարվել են մեծ հանդիսավորությամբ: Ստորև ներկայացնում ենք իրանցիների՝ արևին նվիրված հանդիսավոր արարողության նկարագրությունը հաշվի առնելով, որ այն անպայման ընդհանրություններ է ունեցել հայոց նմանատիպ արարողությունների հետ: Ստրաբոնը վկայում է, որ Մարաց (նաև պարսիկների) սովորություններից շատերը նույնն են Հայոց հետ²³: Հիշենք նաև, որ հայերը, պարսիկները և մարերը արիական ցեղեր էին և նախահայրենիքում պաշտում էին նույն աստվածներին: Ահա այդ արարողության նկարագրությունը.

Արևին մատուցվելիք ողջույնի թափորը արևածագեն առաջ կկազմվեր: Քահանայապետը թափորը կառաջնորդեր՝ անոր կհետևեին Մոգերու երկար շարան մը անբիծ ձերմակ հագնված:

Տաղեր կերգեին ու արծաթյա բուրվառներուն մեջ սուրբ կրակ կտանեին: Մոգերուն կհետևեին 365 պատանհներ՝ կարմիր հագած, որոնք կներկայացնեին տարվա 365 օրերը և կրակը: Ասոնց կհետևեր Արևին կառքը, թափուր, ծաղկե պսակներով զարդարված, ընդ որում լծած կլլային հողակապ ձերմակ ձիեր-զուտ ոսկյա ասպազենով: Հետո կուզար փառավոր ձերմակ ձի մը, որին ճակատը ակունքով (զարդեր) զարդարված կըլլար... Ձերմակ ձիուն կհետևեր թագավորը ոսկեզարդ փղոսրյա կառքին մեջ նստած²⁴: Թափորը կազմվում էր արևածագից առաջ... ու երկրպագում էին Արև-աստծո երկրի վրա ընկնող առաջին ճառագայթները:

Հայը երկրպագել, նաև զոհեր է մատուցել Արևին: Հույն պատմիչ Քսենոֆոնը (մ. թ. ա. 5-րդ դար) իր «Անաբազիս» աշխատության մեջ վկայում է. «Ապա Քսենոֆոնը մեկնեց տանելով գյուղապետին նրա ընտանիքի քով, և իր պատավ ձին, որ ստացել էր՝ տվեց գյուղապետին, կերակրե ու զոհ բերե, որովհետև լսել էր՝ թե նվիրատված է Արևին»²⁵:

²³ Ստրաբոն, Եր., 1940 թ., էջ 51

²⁴ Ա. Մնացականյան, Արևապաշտության հետքերը հին Հայաստանում, Եր., 1948 թ., էջ 83

²⁵ Քսենոֆոն, Անաբազիս, Եր., 1970 թ., էջ 98

301 թ., երբ Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվեց, դաժան պայքար սկսվեց նրանց դեմ, ովքեր չէին հրաժարվում նախնյաց կրոնից՝ հեթանոսությունից:

Հայոց հին աստվածները խոր արմատներ ունեին ժողովրդի մեջ: Հազարամյակներ շարունակ հայ մարդը պաշտել էր իր սիրելի աստվածներին՝ ԱՐ-ին, Արամազդին, Վահագնին, Միհրին, Անահիտին, Աստղիկին... և հնարավոր չէր հիմնովին արմատախիլ անել հին հավատը: Ավերվեցին մեհյաններն ու սրբատեղիները, ոչնչացվեցին այնտեղ տեղադրված ոսկե, արծաթե ու բրոնզե արձանները, նրանց տեղում եկեղեցիներ կառուցվեցին: Ժողովուրդը ընդունեց նոր կրոնը, բայց շատ վայրերում շարունակում էր ծածուկ պաշտել հին աստվածներին ու նշել նրանց տոները:

Եկեղեցին էլ իր հերթին մեծ ճկունություն հանդես բերեց և հին հավատքի որոշ տոներ քրիստոնեացրեց: Այսպես, Բարեկենդանի հիմքում ընկած էր ձմեռվա ավարտը, նրա մահվան գաղափարը: Տեառնընդառաջ (տրևդեզ, տերնդեզ) կոչվող տոնը, որ նշվում է փետրվարի 13-ին, եկեղեցին կապեց Քրիստոսի գալստյան հետ, իսկ տոնի ժամանակ վառվող ծիսական խարույկը համարվեց ուղեցույց: Զատիկը վերածննդի, հարության, պողաբերության գաղափարն էր արտահայտում: Ծաղկի ու Համբարձման տոնը, որ մայիսին էր տոնվում, նույնպես նվիրված էր ԱՐ աստծուն, նրա զարթոնքին ու հարությանը: Հին հավատքից՝ արևապաշտությունից նորին՝ քրիստոնեությանը անցան նաև ծիսական տարրեր՝ արևելք դառնալով աղոթելը, եկեղեցիները և գերեզմանները դեպի արևելք կողմնորոշելը և այլն: Չնայած եկեղեցու գործադրած ջանքերին եղան մարդիկ, նաև ամբողջ համայնքներ, որոնք ոչ մի գնով չհրաժարվեցին հին հավատքից: Պատմիչները նրանց անվանում են արևորդիներ կամ արևորդիք: Ն. Ընդհանրապես քաղաքի արևապաշտների արևորդիք է անվանում և հոգևոր առաջնորդների և համոզման մեթոդն է առաջարկում նրանց «սատանայապաշտ», «դիվապաշտ» վիճակից հանելու համար:

Դավիթ Ալավկա որդին պավլիկյանների արևորդիների «ազգ» էր համարում:

Եզնիկ Կողբացին բանավիճելով հեթանոսության դեմ ու փառաբանելով քրիստոնեությունը, տալիս է պաշտվող արեգակի շատ գեղեցիկ նկարագրությունը. «Եւ այնու կենդանութեամբ, ասեմ, ամենայն արարածք զնորա բնութենէն կախալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախալ կան: Եւ ինքն մի է, և բազում, և բազում է և մի, որպէս արեգակն մի է և բազում. զի անիվ է և բազում ճառագայթք»²⁶:

Փաստորեն բնության մեջ ամեն ինչ կախված էր արևից, որը մի անիվ էր ու բազմաթիվ ճառագայթներ, իսկ արևի այս պատկերին (արև-անիվ) հանդիպում ենք Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ նմուշների վրա, ժայռապատկերներից մինչև միջնադարյան կենցաղային իրեր ու զարդեր:

Մխիթար Ապարանցին գրում է. «Սոքա (արևորդիք) ոչ ունին գիր և դպրություն, այլ ավանդությամբ ուսուցանեն հարքն զորդիսն իրեանց զոր նախնիք նոցա ուսեալք էին ի Զբաղաշտ մոգէ անդրուշանին պետէ. և ընդ որ (կողմն) երթայ արեգակն ընդ այնմ երկրպագեն, և պատուեն զծառն բարտի և զշուշան ծաղիկն և զբամբակին և զայլսն... Սոցա առաջնորդն կոչի Հագրպետ...»²⁷:

Ինչպես տեսնում ենք արևորդիք աղոթում էին դեմքն այն կողմն ուղղելով, որտեղ այդ պահին գտնվում էր արեգակը: Աղոթելիս նրանք պաշտելի բարդի, շուշան և բամբակենի էին բռնում արեգակի դեմ: Արևորդիները գտնում էին, որ մարդը Արևի զավակն է, իսկ Լուսինը նրա բարի քեռին, որին պետք է հարգել, եթե ոչ՝ լուսնոտությամբ կհիվանդանային: Դրա համար կախում էին լուսնածև հմալիներ²⁸:

Թղկուրանցին արևորդիների մասին գրում է.

Կինն ոչ պրծգայ է յԱրեւորդոյ,

Ոչ ի թուրք է, ոչ ի Հայէ,

Զով որ սիրե Հաւատն այն է:²⁹

²⁶ Եզնիկ Կողբացի, Եղծ. Աղանդոց, 1914 թ., Թիֆլիս, էջ 142

²⁷ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 103

²⁸ Վ. Բոդյան, Հայ ազգագրություն, Երևան, 1974 թ., էջ 206

²⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 93

Եկեղեցու պայքարն այնքան հետևողական է եղել, որ անգամ դատապարտել է արևի, լուսնի և այլ երկնային լուրստ Մովսեսի համարում էր աստծո աթոռը, իսկ երկիրը՝ պատվանդանը և արգելում էր դրանցով երդվելը:

Արևապաշտությունը հայոց մեջ շատ երկար է հարստնել, հասնելով մինչև ուշ միջնադար և ավելի: Այն տարածված էր ոչ միայն Հայաստանում այլև ամբողջ Միջագետքում: 14-րդ դարի վերջերին Լեւոնթմուրը Մերտիննու կողմերը չորս գյուղերու մեջ (Շու, Շմըրշախ, Սաֆարի և Մարագի) արևապաշտներ գտնելով փորձում է մահմեդական դարձնել և չկարողանալով ավերում է քաղաքը և գյուղերը, գրում է Թովմա Մեծոփեցին, իսկ այնուհետև շարունակում է. «և յետոյ դարձյալ սատանայի հնարիվք՝ բազմացան իՄերտին և ի յԱմիդ»³⁰: Իսկ 1288 թ. միջնադարյան մի տոմարագիր ի հեճուկս հեթանոսների արեգակը ներկայացրել է անբան և անհմաստ մարդու կերպարանքով՝ կանգնած գույգ հրեղեն երիվարների միջև³¹:

Պետք է նշել, որ արևի ու արևապաշտների նկատմամբ եղած այս վերաբերմունքն է եղել պատճառը, որ հայկական հնագույն դիցարանի մասին տվյալները աղճատված են, գրված միտումնավոր անփութությամբ ու չթաքցված արհամարանքով:

Սակայն ժողովրդի մեջ շատ խորն էր արևի պաշտամունքը և հաճախ նույնիսկ անեծքով, սրով ու թրով անգամ չեն կարողացել մոռացնել տալ այն: Անհնար էր հազարամյակներ շարունակ, սերնդի-սերունդ անցնող հին, պիտի սատվածների պաշտամունքը ջնջել բոլորությամբ:

³⁰ Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 102

³¹ Վ. Բոդյան, Աշվ. աշխ., էջ 205

ԱՐ ԱՍՏԾՈ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևի հայոց հնագույն ԱՐ աստծո պաշտամունքի խոր հնությունն ու տարածված լինելու մասին են վկայում Հայկական լեռնաշխարհում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ (դժբախտաբար Արևմտյան Հայաստանի տարածքը վատ է ուսումնասիրված):

Մեր հնագույն նախնիները դիտարկել, ուսումնասիրել են երկինքը, արևը, լուսինը, աստղերը, բնության տարերքներն ու աղետները և յուրովի պատկերել տեսածն ու զգացածը: Հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց վրա կան բազմաթիվ զարդաբանականներ արեգակի, լուսնի, աստղերի, երկրի ու այլ մոլորակների պատկերներով, սակայն հատկապես շատ են արևի պատկերները:

Մեր նախնիները արևը պատկերել են երկրաչափական մարմինների (խաչ, սվաստիկա, շրջանակ), կենդանիների ու թռչունների (առյուծ, ձի, ցուլ, խոյ, արծիվ), իսկ ավելի ուշ՝ մարդկային կերպարանքով (ԱՐ, Արամազդ, Վահագն, Միհր):

Արևի ու նրա խորհրդանշանների ուսումնասիրության համար շատ կարևոր են հայկական ժայռապատկերները (Արագած, Գեղամա լեռներ, Սյունիք, Նախիջևան, Մեծամոր), որոնց ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները (Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Ս. Պետրոսյան) դրանք թվագրում են մ. թ. ա. 5—3-րդ հազարամյակներով:

Ժայռապատկերները մարդկության առաջին գրերն են հիերոգլիֆներից ու սեպագրերից առաջ, որոնց «ճիշտ ընթերցումը» մեծ նշանակություն ունի մարդկության պատմության համար¹:

Նախնադարյան «գրիչը» ժայռերին պատկերել է հնա-

¹ Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971 թ., էջ 17

գույն մարդու կյանքն ու առօրյան ներկայացնող պատկեր-ներ (որս, պաշտամունքային արարողություններ, ծիսական պարեր և այլն): Կերկայացված են նաև տիեզերական պատկերներ, հանդիպում ենք երկնային լուսատուների ու հատկապես արևի պաշտամունքի հետ առնչվող բազմաթիվ խորհրդանշանների: Ժայռապատկերներին արևը պատկերված է ճառագայթավոր անհիվից մինչև խաչ ու սխառիկա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ և՛ Հայաստանում, և՛ հին աշխարհի այլ երկրներում (Ծումեր, Բաբելոն, Եգիպտոս, Ասորեստան) ամենից ավելի տարածված էր արևի գունդը պատկերող անվաճն սկավառակը: Արևը իր պտույտի պահին պատկերվել է որպես անիվ, ճառագայթները՝ ճաղեր, իսկ ընթացքը՝ անհիվի պտույտ: Գեղամա ժայռապատկերներից մեկում արևը պատկերված է ճառագայթավոր անհիվի ձևով՝ վրան մի խոշոր թռչուն, կտուցը դեպի հրավառ գունդը (նկ. 4):

Այս պատկերը մեզ հիշեցնում է ժողովրդական մի հանելուկ. «Խավք ըմ ընցավ էրկնուց, ոսկի լական կեր կտուց»²: Ոսկի լականը արևի սկավառակն է, իսկ թռչունը՝ Արև աստծո կցորդը և փոխանորդը:

Հետաքրքիր են նաև արև-լուսին կապը արտահայտող ժայռապատկերները: Դրանցից մեկում (նկ. 5) պատկերված է մակույկաձև լուսին, իսկ մակույկ-լուսնի մեջ՝ արև: Նմանատիպ պատկերի հանդիպում ենք Վանի թագավորության մի կնիքադրոշմի վրա, որտեղ աղեղնավոր հերոսը կոպում է վիշապի դեմ, իսկ նրանց վերևում պատկերված է մակույկ-լուսին ու արև:

Այս պատկերները հիշեցնում են հայկական ժողովրդական մի հանելուկ. արևն (եղբայր) ու լուսինը (քույր) ման են գալիս գլամով (մակույկով) երկնային ծովում³:

Արևը խորհրդանշող շատ տարածված խորհրդանշան-

² Ս. Հարությունյան, Հայ ժող. հանելուկներ, Եր. 1960 թ., էջ 97

³ Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում, Եր., 1978 թ., էջ 125

Արից են խաչն ու սվաստիկան,⁴ որոնց վաղագույն նմուշներին հանդիպում ենք հայաստանյան ժայռապատկերներին:

Հանդիպում ենք արև-խաչ խորհրդանշանի քառաթև, շրջանակի մեջ առնված, առանց շրջանակի, հավասարաթև ու անհավասարաթև պատկերների: Խաչի հնագույն նմուշներ են Գեղամա ժայռապատկերների հավասարաթև և անհավասարաթև խաչերը (նկ. 6, 7): Հետաքրքիր է նաև Վարդենիսի մեկ ուրիշ ժայռապատկեր, որտեղ պատկերված է խաչաձև միջուկով արևի մեծ սկավառակ, վրան՝ չորս թևատարած մարդկային ֆիգուրներ:

Արևը խորհրդանշող հետաքրքիր ու տարածված խորհրդանշաններից է նաև սվաստիկան, որը խաչի նման է, սակայն թևերի չորս ծայրերը ուղիղ անկյունով թեքվում են դեպի աջ կամ ձախ, հանդիպում ենք նաև բազմաթև, եռաթև, կորածայր, միողոր, բազմողոր և այլ ձևի սվաստիկայի պատկերների: Սվաստիկան անընդհատ շարժման տպավորություն է թողնում, խորհրդանշելով հենց արևի շարժումը: Հավանաբար սվաստիկան տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անվանումներ է ունեցել, սակայն 19-րդ դարից տարածվում է սանսկրիտ սվաստիկան: Հայաստանում տարածված են կեռախաչ, ճանկախաչ, խաչաթև, հավերժության Աշան և այլ անվանումներ:

Սվաստիկայի նկատմամբ միշտ մեծ հետաքրքրություն է եղել աշխարհում: Բազմաթիվ ուսումնասիրողներ (որ Մորգան, Մուրիե, Լիտորե, Գիվմուրտիե, Մ. Մյուլլեր և ուրիշներ) զբաղվել են սվաստիկայի: առեղծվածով: Գրվել են հոդվածներ, ուսումնասիրություններ, որտեղ հիմնականում հեղինակները համակարծիք են եղել սվաստիկան արիական ցեղի հին խորհրդանիշ լինելու և այդ ցեղի հետ նրա տարածման հարցում: Ըստ վերոհիշյալ գիտնականների սվաստիկան կազմված է սանսկրիտ սու-լավ, բարի և ասթի-

⁴ Բազմաթիվ ուսումնասիրողներ (Գ. Գեորգա, Ա. Նեչևարդ, Դեշելետ, Ա. Միլլեր, Բ. Պիտտովսկի, Ստ. Եսայան) գտնում են, որ հենց խաչն ու սվաստիկան են ավելի հաճախ հանդիպում հնագիտական կրթին որպես արևի խորհրդանշաններ:

լավ լինել բաղադրիչներից, որ նշանակում է բարեկեցու-
թյուն, երջանիկ վիճակ, իսկ կա-ն մասնիկ է⁵:

Անվանի լեզվաբան Հր. Աճառյանի «Հայ արմատական
բառարան» աշխատության մեջ հանդիպում ենք արև բառի
իմաստային մի բացատրություն, որը շատ կարևոր է սվա-
տիկա բառի ստուգաբանության համար: Այսպես, մի շարք
ուսումնասիրողներ արև իմաստն են դնում գեղորեկ
hvaro և սանկրիտ svar (փայլուն)⁶ անվանումների մեջ:
Հիշենք նաև ուսերեն СВЕТ (լույս) բառը:

Աճառյանի վերոհիշյալ աշխատության մեջ կարդում ենք
նաև, որ «աստ», «ազդ» հնդեվրոպական բառարմատները
նշանակում են ուժ, զորություն, իսկ ուժ, զորություն ունենում
են աստվածները: Հետևաբար մի քիչ ուշադիր լինելու դեպ-
քում նկատում ենք, որ սվաստիկան կազմված է svar (փայ-
լուն, լույս) և asti (աստիած, աստված) բաղադրիչներից, որը
լույսի աստված իմաստն ունի, կա-ն մասնիկ է:

Սվաստիկայի ուսումնասիրման համար անչափ կարևոր
են Գեղամա և Սյունյաց ժայռապատկերները: Բազմաթիվ են
սվաստիկայի պատկերները հատկապես Գեղամա լեռների-
նրանցից մեկը կոմպոզիցիոն պատկեր է (նկ. 8):

Պատկերված է սվաստիկա և վեց մանր շրջանակներ,
ենթադրվում է, որ «ներկայացված են արևը, լուսինը և աշ-
քով տեսանելի հինգ մոլորակներ»⁷: Գեղամա ժայռապատ-
կերներից հիացմունք է պատճառում սվաստիկա-արևի մեկ
այլ նմուշ (նկ. 9): Հետաքրքիր է, որ այդ պատկերում սվա-
տիկայից ներքև պատկերված է մետրոսյան այբուբենի Ռ
տառը:

Ժայռապատկերներ հայտնաբերվել են նաև Իսպանիա-
յում, Աֆրիկայում, Սիրիայում, Միջին Ասիայում, Սիբիրում
և այլ երկրներում, որոնք թվագրվում են մ. թ. ա. 2-րդ—1-ին
հազարամյակներով⁸:

⁵ Ա. Եզեկյան, Սվաստիկա, Ազգ. հանդես, գիրք 17, 1908 թ.,
էջ 145

⁶ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 311

⁷ Հ. Իսրայելյան, Երկնային մարմիններն ու լուսատուները բրոն-
զեդարյան արվեստում, Լրաբեր, 1968 թ., թիվ 5, էջ 87

⁸ Հ. Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Եր., 1971 թ., էջ 51

Խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշներ հայտնաբերվել են նաև այլ երկրներում:

Սվաստիկայի վաղ նմուշներ են հայտնաբերվել Հնդկաստանում, Իրանում և Հունաստանում: Սվաստիկա է դրոշմիված Արտեմիս, Հերա, Դեմետրե, Աստարտե, Նանա աստվածուհիների արձանիկներին, որոնք թվագրվում են մ. թ. ա. 2-րդ հազարամյակով:

Խաչի հնագույն նմուշներ հայտնաբերվել են Եգիպտոսում, Հնդկոսում (Կիպրոս), Էտրուրիայում (Իտալիա), Ասորեստանում և այլն:

Եգիպտոսում փարավոնները իբրև աստվածային նշան վզից կախում էին բրոնզե խաչ, իսկ զգեստներին պատկերում էին խաչեր: Բրոնզե խաչեր են կրել փարավոն Ամենհոտեպ 3-րդը (մ. թ. ա. 1455—1419 թթ.) և Ամոն-արև աստծո քուրմը, իսկ եգիպտական թագուհի: Նեֆերտիտիի (հարի-միտանական ծագումով)⁹ թագին պատկերված է թևալոր խաչ: Խաչ է կրել նաև ասորական Շամշի-Ադադ թագավորը (մ. թ. ա. 824—812 թթ.): Հին Հռոմի տաճարներում անշեջ կրակը վառ պահող վեստալուհիները ևս իրենց վզին կրում էին խաչ: Խաչեր են դրոշմված նաև հին հռոմեական զենքերին, պոնտական, հունական, հռոմեական դրամներին և այլն:

Ինչպես տեսնում ենք ոչ հայաստանյան խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշները թվագրվում են մ. թ. ա. 2-րդ—1-ին հազարամյակներով, իսկ հայկականը՝ մ. թ. ա. 5—2-րդ հազարամյակներով: Հետևաբար հայաստանյան ժայռապատկերների խաչի ու սվաստիկայի պատկերները մինչև այժմ երբևէ հայտնաբերված խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշներն են:

Ժայռապատկերներին հանդիպում ենք նաև պարուրան արևանշանների, որոնք նույնպես անընդհատ կրկնվող շարժման, վերարտադրության, անսպառության նշանակություն ունեն:

Արևն ու նրա խորհրդանշանները մեծ քանակությամբ ու

⁹ Այս մասին տե՛ս մեր «Եգիպտոսի հայ թագուհիները» հոդվածը, Երեկոյան Երևան (օրաթերթ), 1992 թ., թիվ 236

բազմապիսի ձևերով պատկերված են նաև հնագույն գեներիին, զարդերին, խեցեղենին և այլն:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում կատարված հնագիտական պեղումների (Ռեուլեր, Ն. Մառ, Յ. դը Մորգան, Է. Շանտր, Խ. Սամվելյան, Հ. Օրբելի) ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ իրեր արևի ու նրա խորհրդանշանների պատկերներով: Այդ իրերին արևը հաճախ պատկերված է ուղեկից կենդանիների հետ (առյուծ, ձի, խոյ, ցուլ, արծիվ): Ուսումնասիրողները (Գր. Ղափանցյան, Հր. Աճառյան, Հ. Մարտիրոսյան) պընդում են, որ թռչունները (ծիծեռնակ, արագիլ) ներկայացնում են գարնան արևը, առյուծը՝ ամռան արևը, իսկ ձին, որն ավելի հաճախ է պատկերված հայտնաբերված հնագիտական նյութերի վրա «արևի մշտնջենական, անփոփոխ ուղեկիցն էր տարվա բոլոր եղանակներին»¹⁰:

Մեր նախնիների պատկերացմամբ արևի գունդը երկնականարում շարժվում էր առյուծների, ձիերի, ցուլերի և այլ արագավազ ու հզոր կենդանիների օգնությամբ: Հետաքրքիր է, որ հայտնաբերված հնագիտական իրերին ձիերը միշտ պատկերված են շարժման, վարգի ընթացքում, իսկ այդ վիճակը համապատասխանում է արևի շարժման ընթացքին: Ղ. Ալիշանը նույնիսկ նշում է ձիերի անունները՝ Էնիկ, Մենիկ, Բենիկ, Սենիկ,¹¹ որոնք լծված էին արևի կառքին և որոնց օգնությամբ շարժվում էր արևի կառքը երկրնքում: Ձիերի օգնությամբ արևի շարժման տեսարան է պատկերված Լճաշենից հայտնաբերված բրոնզե գոտու մի բեկորի վրա (նկ. 10): Պատկերված է զույգ ձիեր լծված երկանիվ կառք, որի առջևում և ետևում արևի աստծո մարդակերպ, ֆալլիկ պատկերներ են: Այս ֆիգուրների մոտ տարբեր դիրքերով պատկերված են արևի սկավառակներ: Նմանատիպ բրոնզե մի գոտի էլ հայտնաբերվել է Սանահին գյուղում: Գոտու վրա պատկերված են չորսական ձիեր քառատրոփ վազքի ժամանակ և արեգակ՝ տարբեր բարձրությունների վրա:

¹⁰ Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 137

¹¹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 88

Բ. Թումանյանը գտնում է, որ ձիերը տեղափոխում են արեգակը, խորհրդանշելով տարվա 12 ամիսները¹² (12 ձի է պատկերված գոտու վրա): Նա պնդում է նաև, որ դա գոտի-օրացույց է: Հետաքրքիր է նաև այն, որ Սանահիճի դամբարանում հայտնաբերված ձիերի պարանոցների մոտ գտնվել են նետեր, որոնք դասավորված են եղել արևի ճառագայթների նման, ընդ որում նետերը սուր ծայրով ուղղված էին դեպի երկիր, որն արևի իջնող ճառագայթների տպավորություն էր թողնում¹³:

Այսպիսով մեր նախնիների պատկերացմամբ արևն իր շրջապտույտը կատարել է ամենաարագալից կենդանու՝ ձիերի կամ ձիեր լծված կառքի միջոցով: Այդպես է նաև հունական դիցաբանության մեջ. Հելիուսը՝ արևի աստվածը երկնքում շարժվում էր ձիեր լծված կառքի միջոցով: Չևսը ևս հանդես է գալիս կառքով ու ձիերով:

Ռրպես ուղեկից կենդանի շատ հաճախ արևի հետ հանդես է գալիս նաև առյուծը: Հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արև-առյուծ կապը շատ ուժեղ է արտահայտված: Հիշենք, որ ախթարքում (գողիակ) առյուծը փոխարինում է հուլիս-օգոստոս շատ տաք ամիսներին, իսկ այդ ամիսները պատկերվել են առյուծի կերպարանքով:

Վանի թագավորության ժամանակաշրջանի (մ. թ. ա. 9—7-րդ դդ.) վահանների ու գոտիների վրա պատկերված են բազմաթիվ առյուծներ: Այս առումով հետաքրքիր են նաև Էրեբունի ամրոցի որմնանկարները: Վերևում արդեն նշվել է, որ Էրեբունի ամրոցի որմնանկարներից մեկը ներկայացնում է Վանի թագավորության գլխավոր աստված Խալդ-Հադիին կանգնած առյուծի մեջքին: Անտարակուսելի է, որ Խալդ-Հալդ աստծո պաշտամունքը կապ ունի արևի պաշտամունքի հետ: Հայտնաբերվել են նաև առյուծի քանդակներ, առյուծագլուխ ապարանջաններ և այլն:

¹² Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրուզե դարի գոտի-օրացույց, Եր., 1965 թ., էջ 30

¹³ Հ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը հին Հայաստանում, Եր., 1928 թ., էջ 94

Կենդանիներից ցուր ևս կապ ունի արևի պաշտամունքի
հետ: Ավելի ուշ արևի ԱՐ աստծուն փոխարինած արևի ու
կրակի աստված Միհրը հանդես է գալիս ցույի ուղեկցու-
թյամբ:

Արևը հանդես է եկել նաև որպես թռչող աստվածություն:
Հանդիպում ենք թևավոր սույուծների, ձիերի, ցուլերի պատ-
կերների: Հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպում (Քուռ-
կիկ-Ջալալի), ժողովրդական գրույցներում, հեքիաթներում
չստ ենք հանդիպում թևավոր ձիուն, որը կարող է թռչել
երկինք՝ արևի մոտ, ուժ առնել և վերադառնալ երկիր:

Արևը և նրա խորհրդանշանները մեծ քանակությամբ
պատկերված են նաև պեղումների ժամանակ հայտնաբեր-
ված խեցեղեն անոթների վրա: Այդպիսի բազմաթիվ իրեր
են հայտնաբերվել Ծիրակի, Իջևանի, Տաուշի, Լճաշենի և
այլ վայրերի կացարանների ու դամբարանների պեղում-
ների ժամանակ: Խեցեղենին արևի ամենից ավելի հաճախ
հանդիպող խորհրդանշանները դարձյալ խաչի ու սվաստի-
կաչի պատկերներն են:

Սվաստիկաչի պատկերով հնագույն խեցանոթը հայտնա-
բերվել է Ծենգավիթ բնակավայրից (մ. թ. ա. 4-րդ հազ.
վերջ, նկ. 11): Այն գունագարդ է, զարդարված թռչունների,
օձերի, շրջանակների ու սվաստիկաչի պատկերներով:
Կենտրոնում եռաթև պատկեր է առնված շրջանակի մեջ:

Հատիճի դամբարանի պեղումների ժամանակ հայտնա-
բերվել է խեցանոթների հարուստ հավաքածու, որոնք հիմ-
նականում զարդարված են արևի ու նրա խորհրդանշաննե-
րի պատկերներով: Ավանի և Քանաքեռի խճուղիների հատ-
ման վայրում, հողային աշխատանքների ժամանակ հայտնա-
բերվել են խեցանոթներ ու բրոնզե դաշույն: Աչքի են
ընկնում գունագարդ երեք սափորներ, որոնցից մեկը
(մ. թ. ա. 2-րդ հազ. 2-րդ կես., նկ. 12) զարդարված է ափ-
քաձև նախշերով ու սվաստիկաներով:

Հայտնաբերված խեցանոթների մեջ հանդիպում ենք նաև
այնպիսի նմուշների, որոնց վրա սվաստիկան պատկերված
է հատակին, արտաքին մասում: Այդպիսիք հայտնաբերվել
են Լճաշենից, Արթիկից և այլ վայրերից:

Հանդիպում ենք նաև երկնյուղ և եռանյուղ թերումներով սվաստիկաների: Այդպիսիք հայտնաբերվել են Արթիկից, Քարաշամբից, Վանաձորից և այլն: Գեղեցիկ է հատկապես Քարաշամբից հայտնաբերված սափորը, որի իրանը գոտեվորված է երկնյուղ և եռանյուղ սվաստիկաներով (մ. թ. ա. 2-րդ հազ. կես., նկ. 13):

Հայտնաբերված խեցանոթներին հանդիպում ենք նաև խաչի պատկերների: Սևանից հայտնաբերված ոչ մեծ կարմիր խնոցու իրանին՝ կանթից վերև ու ներքև պատկերված են գեղեցիկ երկու խաչեր (մ. թ. ա. 2-րդ հազ. կես., նկ. 14), իսկ կանթի մոտ պատկերված է շրջանակ: Խաչի պատկերներով զարդարված խեցանոթների մեջ ևս հանդիպում ենք նմուշների, որոնց վրա խաչը պատկերված է հատակին՝ արտաքին մասում:

Խեցեղենին հաճախ պատկերվել է ոչ միայն խաչ ու սվաստիկա, այլ հենց արև:

Հնարավոր է, որ խաչի, սվաստիկայի ու արևի պատկերներով զարդարված այս խեցանոթները օգտագործվել են արևի պաշտամունքին նվիրված ծիսակատարությունների ու արարողությունների ժամանակ:

Խաչի ու սվաստիկայի պատկերների հանդիպում ենք նաև կենցաղային իրերին, քարե կուռքերին և այլն: Հագվագյուտ մի աղորիք է հայտնաբերվել Իջևանի Աջաջուր գյուղում, ցավոք այն ամբողջական չէ, պահպանվել է տրորիչի մի մասը, որի վրա պատկերված են զույգ սվաստիկաներ (մ. թ. ա. 1-ին հազարամյակի կես., նկ. 15):

Խաչի, սվաստիկայի և արևի այլ խորհրդանշանների պատկերների մեծ քանակությամբ հանդիպում ենք նաև պեղումների ժամանակ հայտնաբերված մետաղական իրերին: Դրանք զենքեր են, զարդեր, կենցաղային իրեր և այլն:

Լոռի-Բերդի, Լճաշենի, Շիրակի, Իջևանի և այլ բնակավայրերի պեղված դամբարանների մեջ մեծ թիվ են կազմում ուազմական առաջնորդների և ուազմիկների դամբարանները, որտեղից հայտնաբերվել են մեր նախնիների ուազմական արվեստը ներկայացնող բազմաթիվ հետաքրքիր նմուշներ: Դրանք զրահաշապիկի մնացորդներ են, դաշույններ, ճա-

կատակազներ, պատշաններ, ճարմանդներ, վահաններ, վահանակ-սկախտակներ, կոճակներ և այլն, որոնք զարդարված են գեղեցիկ փորագրություններով ու քանդակներով: Պատկերված են սույուծներ, վիշապներ, արեգակ, խաչ, ավստոսիկա և այլն: Հայտնաբերված այս նյութերը նաև ցույց են տալիս, որ մեր նախնիների մոտ ռազմական արվեստը զարգացման բարձր մակարդակ է ունեցել: Հայաստանը համարվում է մետաղների մշակման հայրենիքը (մ. թ. ա. 4-րդ հազ. վերջերից, վաղ բրոնզ), հետևաբար հայ ռազմիկները զինված են եղել ժամանակի լավագույն մետաղե (բրոնզ, երկաթ) զենքերով և ունեցել են լավագույն ռազմական հանդերձանքը: Եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը համարվում է նաև ձիու ընտելացման հնագույն տարածքներից մեկը (մ. թ. ա. 6-րդ հազ.),¹⁴ և այստեղ վաղ են սկսել ձին ու մարտակառքը օգտագործել ռազմական նպատակներով, ապա պարզ կդառնա մեր նախնիների արիների հաջողության պատճառը:

Հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ ռազմիկների համար հատկապես սիրված խորհրդանշաններ են եղել խաչն ու սվաստիկան, քանի որ դրանք հաճախ են պատկերվել զենք-զրահին ու հանդերձանքին:

Հնում ռազմիկի հիմնական զենքերից մեկը եղել է դաշույնը, որը նախ պատրաստվել է բրոնզից (մ. թ. ա. 4 հազ. վերջ), այնուհետև երկաթից (մ. թ. ա. 10—9-րդ դդ.): Երկաթե շատ հետաքրքիր դաշույն է հայտնաբերվել Իջևանի Չարխեշ գյուղում, որի դաստակը պատրաստված է բրոնզից ու զարդարված սեպանախշերով և ուղղահայաց դասավորված զույգ սվաստիկաներով (մ. թ. ա. 1-ին հազ. սկիզբ, նկ. 16): Ռազմական արվեստի գեղեցիկ նմուշներ են Արթիկից հայտնաբերված երեք մարտական սակրերը (կացիններ), որոնցից «երկուսը շատ յուրահատուկ են և իրենց նմանը չունեն Անդրկովկասի նյութական կուլտուրայի վաղ

¹⁴ Ս. Մեջլումյան, Ընտանի ձին հայկական լեռնաշխարհում, Էություն (հանդես), 1992 թ., մարտ, էջ 25

բրոնզե դարաշրջանի պատմության մեջ»¹⁵: Մարտական այդ կացիաների հատող մասերը շատ յորահատուկ են, նրանք խիստ կորացված են, կոթառը, որին հագցվել է փայտե մասը, հարուստ է զարդաքանդակներով, իսկ սակրերից մեկի կոթառին այլ զարդաքանդակներից բացի պատկերված է նաև սվաստիկա (մ. թ. ա. 2-րդ հազ. կես., նկ. 17):

Հանդիպում են նաև խաչի ու սվաստիկայի միացյալ պատկերներով զարդարված գեղքի նմուշների: Այլներից հայտնաբերվել է երկաթե դաշույնի բրոնզե պատյան (մ. թ. ա. 7-րդ—6-րդ դդ., նկ. 18), որը բաժանված է երեք անհավասար մասերի: Վերևում պատկերված է բազմաթիվ ճառագայթներով արև, միջին մասում՝ գույգ սվաստիկաներ, իսկ ներքևում՝ շրջանակի մեջ առնված հավասարաթև խաչ:

Հնում ուազմիկի հանդերձանքի անբաժան մասն է կազմել ճակատակալը, որը պատրաստվել է մետաղից, իսկ որպեսզի հարմար լիներ կրելը, այն հագցվել է կաշվե կամ գործվածքե հիմքին: Փափուկ այդ հիմքը նաև մեղմել է հակառակորդի հարվածի ուժը: Բրոնզե գեղեցիկ ճակատակալ է հայտնաբերվել Լոռի-Բերդի դամբարանադաշտից (մ. թ. ա. 12—11-րդ դդ., նկ. 19), որը զարդարված է կետանախշ պատկերներով: Կենտրոնում պատկերված է գեղեցիկ, կանոնավոր սվաստիկա:

Ռազմական հանդերձանքի մաս են կազմել նաև խաչի կամ սվաստիկայի պատկերով մետաղե խոշոր վահանակները, որոնք ամրացվել են հանդերձանքին, կրծքի և որովայնի շրջանում պաշտպանական նպատակներով: Այդպիսի բրոնզե սվաստիկա-վահանակ է հայտնաբերվել Չաղալուից (Սևանի ավազան), որը պատրաստված է բրոնզե թիթեղներից (մ. թ. ա. 13—12-րդ դդ., նկ. 20), իսկ Արծվաբերդից հայտնաբերվել է բրոնզե խաչ-վահանակ (մ. թ. ա. 13—12-րդ դդ., նկ. 21), որի կենտրոնում պատկերված է շրջանակ: Հայտնաբերվել են նաև խաչի պատկերով բրոնզե վահանակներ ու սկավառակներ, որոնք մեծ քանակությամբ

¹⁵ Т. Хачатрян, Древняя культура Ширака, 1975 г., стр. 179

ամրացվել են հանդերձանքին, դարձյալ պաշտպանական
նպատակներով: Այդպիսիք հայտնաբերվել են Օշականից,
Արթիկից, Արծվաբերդից և այլն: Գոլովինոյից (Դիլիջանի
ըջան) հայտնաբերվել է ոլորված կաշվից ու փայտից
պատրաստված գրահ, որի վրա ամրացված են եղել արևի
պատկերով սկավառակներ (մ. թ. ա. 2-րդ հազ. վերջ., նկ.
22): Զրահը գոգնոցի նման կաշվե փոկերով կապվել է
եռևում:

Հնագետ Է. Շանտրը դարասկզբին Հայաստանի հյու-
սիսում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերել է
բրոնզե գոտու մաս, որի վրա պատկերված են սվաստիկա-
ներ (մ. թ. ա. 1-ին հազ. սկզբ., նկ. 23): Զգացվում է, որ
գոտին ամբողջությամբ զարդարված է եղել սվաստիկանե-
րով: Եզակի նմուշ է Լոռի-Բերդի դամբարանադաշտից
հայտնաբերված ոսպնիկի ֆալիկ արձանիկով բրոնզե շե-
րեփը (մ. թ. ա. 12-րդ դ., նկ. 24): Շերեփի բռնակը, ոսպնի-
կի կործքը, գլուխը և ձեռքերը զարդարված են սեպանախ-
շերով, իսկ ոսպնիկի աջ ազդրին պատկերված է սվաս-
տիկա:

Արևը իր խորհրդանշաններով անշափ շատ է պատկեր-
ված նաև զարդերի վրա: Մեծ քանակությամբ այդպիսի
սկանջօղեր, կախազարդեր, կոճակներ, գոտու մասեր, ա-
պարանջաններ ու այլ զարդեր են հայտնաբերվել Վանա-
ձորի Դիմաց թաղից, Լոռի-Բերդից, Իջևանից, Արթիկից և
այլն: Շատ գեղեցիկ են Վանաձորից հայտնաբերված ինը
ծարիրե կախազարդերը (մ. թ. ա. 11—10 դդ., նկ. 25, 26,
27), որոնք զարդարված են խաչի, սվաստիկայի ու արևի
պատկերներով:

Ծարիրե հրաշալի մի կախիկ է հայտնաբերվել Ծամխոր
ախանում (մ. թ. ա. 2-րդ հազ. սկզբ., նկ. 28): Կախիկի
կենտրոնում պատկերված է սվաստիկա, որը խորհրդանշում
է երկնային աշխարհը՝ արևը, սվաստիկայի չորս կողմերում
պատկերված են երկիրը խորհրդանշող բարձր գագաթներ
(լեռներ) ու երկրային կենդանիներ (եղջերու, այծ, եղնիկ),
որոնք եզրափակվում են ջրային թռչունների պատկերներով:
Այս կախիկը մեզ է ներկայացնում մեր նախնիների պատկե-

բացումները տեղերքի երեք տարրերի՝ հողի, օդի ու ջրի ծախին:

Շատ գեղեցիկ կանաչի մի արձանիկ է հայտնաբերվել Վանում (մ. թ. ա. 1-ին հազ. սկիզբ., նկ. 29, որն ըստ շատ ուսումնասիրողների (Պիտորովսկի, Մելիքիշվիլի, Սո. Եսայան, Հ. Մարտիրոսյան) պատկերում է Վանի թագավորության գլխավոր աստված Հադիի կնոջը՝ աստվածուհի Արուբանիին (նաև Բակբարտու): Աստվածուհին նստած դիրքով է, ձեռքերն առաջ մեկնած, պարանոցից կախված է խոշոր խաչ:

Հայաստանում կատարված հնագիտական պեղումները ի հայտ են բերել արիների ռազմական արվեստը խորհրդանշող ևս մեկ խորհրդանիշ՝ մարտակառքի հնագույն մնացորդներ և մոդելներ: Պատահական չէ, որ Հայաստանում դրանք հաճախ են հայտնաբերվում, չէ որ անհիվը, որ շարժման մեջ է դնում կառքը, արևի նման է, իսկ արևը անընդհատ շարժման մեջ է և հնարավոր է, որ անհիվի գաղափարը ծագել է հենց արևի շարժման ընթացքը դիտելուց հետո: Արև-անհիվներով հետաքրքիր մարտակառքեր են հայտնաբերվել Լճաշենի, Լոռի-Բերդի և այլ դամբարանների պեղումներից: Լճաշենի մարտակառքերից մեկի անհիվները մասնիվ են, սեպյաձև ճառագայթներով, մարտակառքին լծված են զույգ ձիեր: Պատկերված են նաև սաղավարտներ դրած զույգ ռազմիկներ, որոնք զինված են դաշույններով: Լոռի-Բերդից հայտնաբերված մարտակառքի անհիվները ավելի թեթև են, ճառագայթաձև (մ. թ. ա. 14—13-րդ դդ., նկ. 39), դարձյալ պատկերված են զույգ ռազմիկներ, որոնցից մեկը սաղավարտով է, մյուսը՝ առանց սաղավարտի:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո հայ վարպետները շարունակում էին արևը, խաչն ու սվաստիկան օգտագործել որպես խորհրդանիշ ու զարդանախշ: Խաչը շարունակում է հարատևել նաև հայկական նշանագրերում, սակայն ժամանակի հետ կորցնում է արևը խորհրդանշող սիմվոլի նշանակությունը և ստանում «քրիստոնեական խաչ» իմաստը:

Հայոց միջնադարյան մայրաքաղաքներ Անիից և Դվի-

նից հայտնաբերվել են բազմաթիվ իրեր արևի ու նրա խորհրդանշանների պատկերներով: Հայտնաբերված իրերից բերան ունեցող սափորները, որոնք հարմար էին հեղուկներ պահելու համար: Այս սափորներից մեկի վրա (11—12-րդ դդ., նկ. 31) պարզ երևում է սվաստիկայի պատկերը: Անեցի վարպետները խաչ ու սվաստիկա են պատկերել նաև Անիի պարիսպներին: Ինչպես տեսնում ենք պեղումների ժամանակ Հայաստանում հայտնաբերված հնագիտական նյութերի վրա ամենից հաճախ հանդիպող արևի խորհրդանշանները խաչի ու սվաստիկայի պատկերներն են: Հավանաբար մեր նախնիները այս խորհրդանշանները դիտել են նաև որպես հմայիլներ, որոնք պետք է պահպանեին կրողին, հաջողություն ու երջանկություն բերեին նրան, ինչպես նաև վանեին չարն ու դժբախտությունը:

Հայկական լեռնաշխարհի բազում հրաշալիքներից մեկն էլ «Վիշապ» կոչվող քարակոթողներն են, որոնք հայտնաբերվել են բարձր լեռներում, արոտավայրերում, լճերի ու աղբյուրների մոտ: Ուսումնասիրողներից ոմանք (Սմիռնով, Մառ, Պիոտրովսկի) գտնում են, որ դրանք պողպեղաթյան ու ջրի աստվածներ են: Մ. Աբեղյանը դրանք համարում է Աստղիկ աստվածուհու արձանները¹⁷, որը նաև ձրկնակերպ աստվածության պատկեր է ունեցել: Գր. Ղափանցյանը առաջ է քաշում այն միտքը, որ քարակոթողները նվիրված են ԱՐ աստծուն, որը «սինկրետիկ բնույթի աստված էր և իր մեջ միացնում էր այն ամենը, ինչ ակնկալում էր գյուղացին. գարուն, բույս, ցորեն, վար ու ցանք, նաև ջուր»¹⁷: Ղափանցյանը գտնում է նաև, որ ԱՐԱՅԻ քարակոթողները ստեղծվել են երկաթե գործիքներով, հետևաբար վերաբերվում են մ. թ. ա. 2-րդ հազարամյակին¹⁸:

Գ. Սրվանձոյանը և Մ. Աբեղյանը գտնում են, որ այս քարակոթողները «ցասման խաչեր» են և դրվել են տարերային գանազան արհավիրքներից ու աղետներից պաշտ-

¹⁷ Մ. Աբեղյան, Վիշապներ կոչվող կոթողներն իբրև Աստղիկ-Գերկետո դիցուհու արձաններ, Եր., 1941 թ., էջ 167

¹⁸ Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկ, Եր., 1944 թ., էջ 150

¹⁹ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 153

պանվելու, ինչպես նաև աստծո «ցաւան ղեւն առնելու» համար: Այս տեսակետը միանգամայն ընդունելի է:

Արևը ոչ միայն ջերմացրել ու լուսավորել է մարդուն, այլև ցույց է տվել օրվա պահերը: Դիտելով արևի ընթացքն ու դիրքը երկնակամարում, մարդը զանազանել է օրվա պահերը՝ առավոտ, կեսօր, իրիկուն: Մարդը կարողացել է նաև նրա ստվերի օգնությամբ մոտավորապես որոշել օրվա ժամերը: Այսպես ստեղծվել է արևի առաջին պարզունակ ժամացույցը: Մեծամորից հայտնաբերվել են ֆալիկ-մարդակերպ արձաններ, «որոնք կարող էին օգտագործվել ժամանակը որոշելու համար»¹⁹: Միջնադարյան հայոց եկեղեցիների վրա պատկերված են ավելի կատարելագործված արևի ժամացույցներ: Զվարթնոցի տաճարին պատկերված է շատ հետաքրքիր արևի ժամացույց, որտեղ ժամանակը ցույց տալու համար օգտագործվել են հայոց այբուբենի տառերը (նկ. 32): Մասնագետները գտնում են, որ Հայաստանը արեգակնային և լուսնային ժամացույցների հայրենիքն է, հարելոնը՝ ջրի, իսկ Եգիպտոսը՝ ավազի²⁰:

Հայաստանում հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևի խորհրդանշաններին հանդիպում ենք վաղ բրոնզի դարաշրջանից (մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակից) մինչև ուշ միջնադար (17—18-րդ դդ.) ընկած ժամանակաշրջանում: Այս երեվոյթը հետաքրքիր է նաև նրանով, որ հազարամյակներ շարունակ պահպանվել ու սերնդե-սերունդ է փոխանցվել ոչ միայն արևի պաշտամունքը, այլև այն պատկերելու բազմազան ձևերը: Սա հազարամյակների ավանդույթ ունեցող մեր ժողովրդի արվեստն է նաև:

Մեր նախնիները արև են պատկերել ամենուր, որտեղ միայն հնարավոր էր: Նրանք արև են պատկերել քարին, կալին, մետաղին, անշուշտ նաև փայտին, գործվածքին, որոնց վաղ նմուշները սակայն չեն հասել մինչև մեր օրերը:

Սա մեկ անգամ ևս վկայում է, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները պաշտել են արևը և արևի ԱՐ աստծուն:

²⁰ Հ. Մարտիրոսյան, Գիտ. սկսվում է նախնադարում, էջ 133

²¹ Հ. Մարտիրոսյան, Գ. Ս. Ն., էջ 133

Վ Ե Ր Չ Ա Բ Ա Ն

Փորձ արվեց վերջին տարիների գիտական ուսումնասիրությունների, նորահայտ փաստերի, արձանագրությունների ու հնագիտական նյութերի հիման վրա ցույց տալ, որ Հայկական լեռնաշխարհում անհիշելի ժամանակներից ապրող արիական ցեղերը (հնդեվրոպացիներ) պաշտել են արևի հզոր աստված ԱՐ-ին: ԱՐ աստվածը խոր հետք է թողել արիական ցեղերի, այդ թվում նաև այդ ցեղի ուղղակի ժառանգորդ հայ ցեղի մշակույթի, կենցաղի, լեզվի, հավատալիքների, աշխարհագրական ու անձնական անունների վրա:

Խոսել ԱՐ աստծո մասին, նշանակում է խոսել Հայաստանի ու հայ ազգի մասին ընդհանրապես, որովհետև առանց այդ աստծո ու նրա պաշտամունքի պարզապես հնարավոր չէ պատկերացնել հային ու Հայաստանը: ԱՐ աստծո պաշտամունքը արևապաշտ հայի արյան ու էության մեջ է, այն նրա հայրենիքն է, նրա անունները, սուրբ վայրերը, գետերը, լեռները: Այն նաև հայոց հրաշք լեզվի, կենցաղի, սովորությունների, երգերի, պարերի, դյուցազնավեպի, հեքիաթների, գրույցների մեջ է:

Անցնող հազարամյակները ոչ միայն մեծ տեղ ու դեր են ապահովել հայերի ու Հայաստանի համար համաշխարհային քաղաքակրթության ստեղծման մեջ, այլև դաժան ու դժվարին պայքար են պարտադրել մեր նախնիներին: Նրանք ստիպված են եղել պայքարելու բազմաթիվ ու բազմապիսի թշնամիների դեմ, որոնց հրապուրել են հայոց ծաղկուն շեներն ու քաղաքները:

Պայքարը շատ հազարամյակներ է տևել, ու միշտ չէ, որ մեր նախնիները հաղթանակով են դուրս եկել պայքարից:

Կյանքի ու մահվան այդ դաժան պայքարում նյութական ու հոգևոր շատ արժեքներ են ոչնչացել: Կործանվել, անա-

լացել են բազմաթիվ բնակավայրեր, բնակիչները ցիր ու ցան են եղել, տարագրվել այլ երկրներ: Իր բնօրրանում թուլացել ու պարտվել է հպարտ հաչը: Բայց ամենից դաժանը ցեղի հիշողության կորուստն է եղել:

Այսպես ապրել ենք դարեր, մոռացած մեր սկիզբը, մեր էությունը, մեր պատմությունը:

Բայց չի լինում այնպես, որ իսպառ մոռացվի, հիշողությունից ջնջվի ու անհետ կորչի ամեն ինչ: Մեր ցեղի հպարտ ոգին, մեր արյունը, մեր էությունը ժամանակ առ ժամանակ զգացնել են տալիս իրենց, հիշեցնում, հաճախ պահանջում ընդվզել, ոտքի ելնել, վերադարձնել կորցրածը...:

Տեղը բազմաթիվ կորուստներից ու երկարատև նիրհից արթնանում է: Արդեն քանի սերունդ փորձում է ճանաչել ինքն իրեն, իր սկիզբը, իր արմատները: Ազգը ինքնաճանաչման միջոցով ինքնագիտակցության է գալիս:

Ճիշտ ճանապարհը գտնված է: Մենք հետևորդներն ենք անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ապրող հպարտ, գեղեցիկ, ազնիվ, արարող, բարի ու քաջ հրնագույն մի ցեղի, որի աստվածներն անգամ (ԱՐ, ԱՐԱՄԱԶԳ, ՎԱՀԱԳՆ, ՄԻՀՐ, ԱՆԱՀԻՏ) գեղեցիկ էին իրենց բնույթով ու հատկանիշներով:

Մենք վերագտնում ենք մեր արմատները, մենք նորից ճանաչում ենք ինքներս մեզ, մեր էությունը, մեր ոգին:

Մենք հավերժ ենք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981 թ.
2. Ազարանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914 թ.
3. Ե. Կողբացի, Եղծ աղանորոց, Թիֆլիս, 1914 թ.
4. Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939 թ.
5. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986 թ.
6. Ստրաբոն, Երևան, 1940 թ.
7. Քսենոֆոն, Անաբասիս, Երևան, 1970 թ.
8. Դիոդորոս Սիկիլիացի, (Պատմական գրադարան), Երևան, 1985 թ.
9. Աբեղյան Մ., Երկեր, հատոր 8, Երևան, 1985 թ.
10. Աբեղյան Մ., Վիշապներ կոչվող կոթողները իբրև Աստղիկ-Ռեբկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941 թ.
11. Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973 թ.
12. Ադունց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1973 թ.
13. Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910 թ.
14. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Երևան, 1971 թ.
15. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, Երևան, 1942 թ.
16. Ավդալբեկյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929 թ.
17. Բդոյան Վ. «Հայ ազգագրություն» Երևան, 1974 թ.
18. Գավուրջյան Մ., Հայ ու Արմեն անունների ծագումը և Ուրարտուն, Բեյրութ, 1973 թ.
19. Դովեան Ն., Խաչատրյան Ա., Պատմութիւն հին հայերի, Թիֆլիս, 1909 թ.
20. Եսայան Ստ., Հայաստանի հնագիտություն, Երևան, 1993 թ.
21. Թումանյան Բ., Մնացականյան Հ., Բրոնզե դարի գոտի-օրացույց, Եր., 1965 թ.
22. Խաչատրյան Աստ., Հայաստանի սեպագր. շրջանի քննական պատմություն, Եր., 1983 թ.
23. Կակոսյան Սլակ, Արարատյան դիցարանը, Երևան, 1991 թ.
24. Կերամ Կ., Աստվածներ, Դամբարաններ, Գիտնականներ, Երևան, 1971 թ.

25. Հարությունյան Ա., Հայ ժող. հաներուկներ, Երևան, 1960 թ.
26. Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960 թ.
27. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 1940 թ.
28. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944 թ.
29. Մարտիրոսյան Հ., Քարե դարից Ուրարտու, Երևան, 1971 թ.
30. Մարտիրոսյան Հ. Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1978 թ.
31. Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Մ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971 թ.
32. Մովսիսյան Ա., Արատոս, Երևան, 1992 թ.
33. Մելիք-Փաշայան Վ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963 թ.
34. Միրիջանյան Լ., Պատմության և առասպելի սահմանը, Երևան, 1986 թ.
35. Շահինյան Լ., Գիրքը դարերի խորքից, Երևան, 1984 թ.
36. Շահինյան Լ., «Ուրարտու» առեղծվածը, Երևան, 1994 թ.
37. Ջանիողադյան Հ., Դվինից և Անիից հայտնաբերված ձվաձև անոթներ, Եր., 1982 թ.
38. Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հտ. 1-ին, Երեւան, 1931 թ.
39. Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հտ. 2-րդ, Երեւան, 1941 թ.
40. Վարպետյան Ա., Ովքեր են ի վերջո արիները, Երևան, 1990 թ.
41. Դիցաբանական բառարան, Երևան, 1985 թ.
42. Մարգարիտներ հայ քնարերգության, հտ. 1-ին, Երևան, 1971 թ.
43. Հ. Ս. Հ., հտ. 2-րդ, 11-րդ
44. Гамкрелидзе Т. Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1973 г., I—II—III
45. Есаян Ст. Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976 г.
46. Есаян Ст., Доспех древней Армении, Ер. 1986 г.
47. Есаян Ст., Калантарян А., Ошакан, Ер. 1988 г.
48. Есаян Ст., Амулеты связанные с культом солнца из Армении, журнал «Советская археология», 1968 г., № 2.
49. Капанцян Гр., Теттские боги у армян, Ер. 1940 г.
50. Пиотровский Б., Ванское царство (Урарту), Ленинград, 1959 г.
51. Платон, Республика, Москва, 1929 г.
52. Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975 г.
53. Хачатрян Т., Армянский некрополь, Ар. 1979 г.
54. Большая советская энциклопедия. 1931 г, том 65


ՀՈԳՎԱԾՆԵՐ

1. Ադունց Ն., Հին հայոց աշխարհայացքը, Հայրենիք (ամսագիր), Բոստոն, 1926—27 թթ.
2. Ահյան Ստ., «Սասնա ծռեր» հայկական էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները, (Պատմա-բանասիրական հանդես, 1985 թ., թիվ 1)
3. Եզեկյան Ա., Սվաստիկա, (Ազգագրական հանդես, Գիրք 17, 1908 թ., թիվ 1)
4. Երեմյան Ս. Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը, (Գիտություն և տեխնիկա, ամսագիր, 1985 թ., թիվ 4)
5. Հ. Իսրայելյան, Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում (Լրաբեր, հանդես, 1967 թ., թիվ 4)
6. Հ. Իսրայելյան, Երկնային մարմիններն ու լուսատուները բրոնզեդարյան Հայաստանում (Լրաբեր, հանդես, 1968 թ., թիվ 5)
7. Հ. Իսրայելյան, Երկվորյակների պաշտամունքի հետքերը հին Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 1980 թ., թիվ 3)
8. Լալայան Ե., Արա Գեղեցիկ ավանդավեսը, (Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902 թ.)
9. Հովհաննիսյան Մ., Ագարակի ժայռափորագրությունը (Լրաբեր, 1990 թ., թիվ 1)
10. Մեջլումյան Ա., Ընտանի ձին Հայկական լեռնաշխարհում (Էություն հանդես, 1992 թ., թիվ 1)
11. Մնացականյան Հ., Արևապաշտության հետքերը հին Հայաստանում (Աշխատություններ, պատմության թանգարան, Երևան, 1948 թ.)
12. Սարգսյան Վ., Բասկերն Արարատ լեռան ստորոտում (Գարուն, 1988 թ., թիվ 3)
13. Տերտերյան Վ., Արարատյան թագավորության դիցարանը համեմատական դիցաբանության լույսի ներքո (Լրաբեր, հանդես, 1991 թ., թիվ 3)
14. Ազգագրական հանդես, 16, 1908 թ., թիվ 1
15. Ազգագրական հանդես, Բ, 1897 թ.,
16. Ազգագրական հանդես, 17, 1908 թ., թիվ 1
17. Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902 թ.
18. Գարուն, ամսագիր, 1990 թ., թիվ 6






У4. 4



У4. 5



У4.6



У4. 7




У4. 8



У4. 9







Նկ. 10




Նկ. 11




Նկ. 13




Նկ. 12




Նկ. 14




Նկ. 15




Նկ. 16




Նկ. 17




Նկ. 20




Նկ. 21




Նկ. 19




Նկ. 18




Նկ. 23




Նկ. 24




Նկ. 22



Նկ. 25



Նկ. 26




Նկ. 27



Նկ. 29



Նկ. 28



Նկ. 30



Նկ. 31



Նկ. 32

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5—8

Մաս 1-ին

1. ԱՐ աստծո պաշտամունքի ծագումը և տարածումը 8—13
2. ԱՐ աստվածը և Արա Գեղեցիկ թագավորը 14—24
3. ԱՐ աստվածը և Հայ-Արմեն անունները 24—31
4. ԱՐ աստծո անունը հայոց աշխարհագրական և անձնա-
կան անուններում 31—32
5. ԱՐ աստվածը և Երևան անվան ծագումը 32—35

Մաս 2-րդ

1. Արևի ԱՐ աստծո պաշտամունքի հետքերը ժողովրդական
բանահյուսության մեջ 36—48

Մաս 3-րդ

1. Արևի ԱՐ աստծո պաշտամունքի հետքերը հնագիտու-
թյան մեջ 49—63

Վերջաբան 64—65

Անժեղա Ավետիսի Տեղյաճ
ԱՐ ԱՍՏԾՈ ՊԱՇՏԱՄՈՒՆԻՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ